

The Heidelberg Catechism in the Armenian Language

ՀԱՅՏԵԼՊԵՐԿԻ ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1563

Հարցում 1. Ի՞նչ է միակ մխիթարությունդ թե՛ կեանքի մեջ, թե՛ մահուան մեջ:

Պատասխան. Թե ես, մարմինով ու հոգիով, թե՛ կեանքի, թե՛ մահուան մեջ իմա չեմ, այլ կը պատկանիմ իմ հաւատարիմ փրկչիս՝ Յիսուս Քրիստոսի, որ իր թանկագին արիւնով իմ բոլոր մեղքերուս պարտքը լիովին վճարեց եւ զիս ապատեց Սատանային ամբողջ իշխանութենէն, եւ զիս այնպէս կը պահէ, որ առանց իմ երկնաւոր հօրս կամքին ոչ իսկ գլխէս մէկ մազ կրնայ թափիլ, եւ թէ ամէն բաները պէտք է փրկութեանս համար գործակցին: Անոր համար, իր Սուրբ Հոգւոյն միջոցաւ նաեւ կու տայ ինծի յաւիտենական կեանքի վստահութիւն եւ ինծի փափաքիլ կու տայ եւ պատրաստակամ կ'ընէ, որ այսուհետեւ իրեն համար ապրիմ:

Ա Կորնթ. 6:19-20, Հռովմ. 14:7-9, Ա Կորնթ. 3:23, Ա Պետ. 1:18-19, Յովհ. 1:7, Եբր. 2:14-15, Յովհ. 6:39, 10:28-29, Ղուկ. 21:18, Մատթ. 10:30, Հռովմ. 8:28, Բ Կորնթ. 1:22, 5:5, Հռովմ. 8:14, 7:22.

Հարցում 2. Քանի՞ բաներ պէտք է գիտնաս, որպէսզի դուն, այս մխիթարութիւնը վայելելով, կարենաս երջանիկ ապրիլ ու մեռնիլ:

Պատասխան. Երեք: Առաջինը, թէ որքա՞ն մեծ են մեղքերս ու թշուառութիւնս: Երկրորդը, թէ ինչպէ՞ս մեղքերէս եւ թշուառութենէս կ'ապատուիմ (կամ կը փրկանաւորուիմ), ու երրորդը, թէ ինչպէ՞ս պէտք է Աստուծոյ

երախտագիտութիւնս արտայայտեմ այդ ապատութեան համար (կամ փրկանաւորութեան համար):

Ղուկ. 24:47, Ա Կորնթ. 6:10-11, Յովհ. 9:41, Հռովմ. 3:10, 19, Յովհ. 17:3, Եփես. 5:8-10.

Ծանօթութիւն. 1. «Փրկանաւորութիւն» կը նշանակէ փրկանքի միջոցով գնումը եւ ապատութիւնը, այսինքն, փրկագին մը վճարելով:

Անգլերէն՝ Redemption, լատիներէն՝ Redemptio, յունարէն՝ Λύτρωσις: Գ.

Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան, *Նոր Բառգիրք Հայկապեան Լեզուի*, Վենետիկ. Սուրբ Ղապար, 1836, 1837:

2. Թարգամանութեան մէջ փակագիծներու մէջ գտնուող բառերը բնագրին մէջ եղող բառերուն սոսկ թարգամանութիւններն են:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ ՅԱՂԱԳՍ ՄԱՐԴՈՒՆ ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ

Հարցում 3. Ուրկէ՞ գիտես թշուառութիւնդ:

Պատասխան. Աստուծոյ օրէնքէն:

Հռովմ. 3:20.

Հարցում 4. Աստուծոյ օրէնքը մեզմէ ի՞նչ կը պահանջէ:

Պատասխան. Քրիստոս մեզի ամփոփ կերպով հետեւեալը կը սորվեցնէ Մատթէոս 22:37-40-ին մէջ: «Յիսուս ըսաւ. "Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ եւ քու բոլոր անձովդ ու քու բոլոր մտքովդ:" Այս է առաջին ու մեծ պատուիրանքը: Ու երկրորդը՝ ասոր նման. "Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս:" Այս երկու պատուիրանքէն կախուած են բոլոր օրէնքը եւ մարգարէները»:

Ղուկ. 10:27

Հարցում 5. Կրնա՞ս այս բաները կատարելապէս պահել:

Պատասխան. Ո՛չ: Ես բնական հակամիտություն մը ունիմ
վաստուած եւ դրացիս ատելու:

Հռովմ. 3:10, Ա Յովհ. 1:8, Հռովմ. 8:7, Տիտոս 3:3.

Հարցում 6. Աստուած այդքան չար եւ յոռի՞ ստեղծեց մարդը:

Պատասխան. Ո՛չ: Քա՛լ լիցի: Աստուած բարի ստեղծեց մարդը,
ու Աստուծոյ պատկերին համաձայն՝ ճշմարիտ
արդարութիւնով եւ սրբութիւնով, որպէսզի ան կարենար
շիտակ կերպով վաստուած՝ իր ստեղծիչը, ճանչնալ, վայն
սրտանց սիրել ու անոր հետ յաւիտենական երանութեան
մէջ ապրիլ, վայն փառաւորելու եւ գովաբանելու համար:

Ծն. 1:31, 1:26-27, Կող. 3:10, Եփես. 4:24, 1:6, Ա Կորնթ. 6:20.

Հարցում 7. Ուրեմն, ուրկէ՞ եկաւ մարդկային բնութեան
եղծումը:

Պատասխան. Մեր նախածնողքին՝ Ադամին եւ Եւային
անկումէն ու անհնապանդութենէն դրախտին մէջ.
հետեւաբար, մեր բնութիւնը այնքան եղծուած է, որ բոլորս
մեղքի մէջ կը յղացուինք եւ կը ծնինք:

Ծն. 3:6, Հռովմ. 5:12, 18-19, Սաղ. 51:5, Ծն. 5:3.

Հարցում 8. Ուրեմն, այնքան եղծուած ենք, որ որեւէ բարի
բան ընելու բոլորովին անկարող եւ ամէն չարութեան
հակամէ՞տ ենք:

Պատասխան. Այո՛, իրապէս այդպէս ենք, բացի եթէ Աստուծոյ
Հոգիէն վերակենդանացած ենք:

Ծն. 6:5, Յոբայ 14:4, 15:14, 16, Յովհ. 3:5, Եփես. 2:5.

Հարցում 9. Ուրեմն, Աստուած անարդարութիւն չի՞ ըներ մարդուն, անկէ պահանջելով իր օրէնքին մէջ այն, զոր մարդը չի կրնար կատարել:

Պատասխան. Երբէ՛ք, քանզի Աստուած մարդը ստեղծեց զայն լիովին կատարելու կարողութեամբ. բայց մարդը, Սատանային դրդումով եւ իր անձնական անհնապանդութեամբ, ինքզինքը եւ ամբողջ իր ապագայ սերունդը վրկեց այդ աստուածային պարգեւներէն:

Ժող. 7:29, Յովհ. 8:44, Բ Կորնթ. 11:3, Ծն. 3:4, 7, Հռովմ. 5:12.

Հարցում 10. Աստուած պիտի թոյլատրէ՞, որ այսպէս անհնապանդութիւն մը եւ ըմբոստութիւն մը առանց պատիժի մնայ:

Պատասխան. Երբէ՛ք: Ան ահռելիօրէն դժգոհ է թէ՛ մեր սկզբնական մեղքէն, թէ՛ մեր ներկայ մեղքերէն: Եւ իր արդար դատաստանով պանոնք պիտի պատժէ թէ՛ ժամանակաւոր, թէ՛ յաւիտենական կերպով, ինչպէս յայտարարած է. «Անիծեալ ըլլայ ա՛ն, որ այս օրէնքին բոլոր խօսքերուն մէջ չի կենար, որ պանոնք կատարէ»:

Սաղ. 5:5, Հռովմ. 1:18, Բ Օր. 28:15, Եբր. 9:27, Բ Օր. 27:26, Գաղ. 3:10.

Հարցում 11. Բայց չէ՞ որ Աստուած նաեւ ողորմած է:

Պատասխան. Աստուած իրապէս ողորմած է, բայց նաեւ՝ արդար: Հետեւաբար, իր արդարութիւնը կը պահանջէ, թէ այն մեղքը, որ Աստուծոյ բարձրագոյն վեհութեան դէմ գործուած է, պատժուի ծայրագոյն պատիժով, այսինքն մարմինի ու հոգիի յաւիտենական պատիժով:

Ելից 34:6, 20:5, Յոբայ 34:10-11, Սաղ. 5:5-6, Ծն. 2:17, Հռովմ. 6:23.

**ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ
ՅԱՂԱԳՍ ՄԱՐԴՈՒՆ ՓՐԿԱՆԱԻՐՈՒԹԵԱՆ**

Հարցում 12. Ուրեմն, քանի որ Աստուծոյ արդար դատաստանին համաձայն՝ մենք թե՛ ժամանակաւոր, թե՛ յաւիտենական պատիժի արժանի ենք, փախուստի ճամբայ մը չկա՞յ, որ այդ պատիժէն ազատինք եւ նորէն Աստուծոյ հաճութեան մէջ ընդունուինք:

Պատասխան. Աստուած իր արդարութիւնը անպայման պիտի գոհացնէ. ուրեմն, մենք պէտք է լման հատուցում կատարենք, ըլլայ մեզմով կամ ուրիշի մը միջոցաւ:

Ելից 20;25, Բ Օր. 24:16, Բ Կորնթ. 5:14-15

Հարցում 13. Կրնա՞նք մենք այս հատուցումը կատարել:

Պատասխան. Երբե՞ք: Ընդ հակառակը, մենք ամէն օր մեր մեղքի պարտքը կ'աւելցնենք:

Յորայ 9:2-3, 15:14-16, Մատթ. 6:12, Եսա. 64:6.

Հարցում 14. Կարելի՞ է գտնել սոսկ արարած մը, որ կարող ըլլայ մեր փոխարէն այս հատուցումը կատարել:

Պատասխան. Ո՛չ, քանզի, առաջին, Աստուած ուրիշ արարած մը պիտի չպատժէ մարդուն գործած մեղքին պատճառաւ: Երկրորդ, ո՛չ մէկ արարած կրնայ մեղքին դէմ Աստուծոյ յաւիտենական բարկութեան բեռը կրել, որպէսզի ուրիշներ անկէ ազատէ:

Եզեկ. 18:20, Յայտ. 5:3, Սաղ. 49:8-9.

Հարցում 15. Ուրեմն, ի՞նչ տեսակ միջնորդ եւ փրկանաւոր պէտք է փնտռենք:

Պատասխան. Պէտք է փնտռենք մէկը, որ ճշմարիտ մարդ ըլլայ ու կատարելապէս արդար, սակայն նոյն ատեն՝ մէկը, որ բոլոր արարածներէն աւելի զօրաւոր ըլլայ, այսինքն՝ մէկը, որ նաեւ Աստուած ըլլայ:

Ա Կորնթ. 15:21, Հռովմ. 8:3, 9:5, Եսա. 7:14.

Հարցում 16. Ինչո՞ւ պէտք է, որ ան ճշմարիտ եւ արդար մարդ մը ըլլայ:

Պատասխան. Որովհետեւ Աստուծոյ արդարութիւնը կը պահանջէ, որ նոյն մարդկային բնութիւնը, որ մեղք գործեց, կատարէ նաեւ հատուցումը այդ մեղքին համար. բայց մէկը, որ ինք մեղաւոր է, չի կրնար ուրիշներու համար հատուցում կատարել:

Հռովմ. 5:12, 15, Ա Պետ. 3:18, Եսա. 53:11,

Հարցում 17. Ինչո՞ւ ան պէտք է միեւնոյն անձին մէջ ըլլայ նաեւ ճշմարիտ Աստուած:

Պատասխան. Որպէսզի իր աստուածութեան զօրութեամբ կարենայ իր մարդկային բնութեան մէջ իր վրայ կրել Աստուծոյ բարկութեան բեռը եւ կարենայ մեզի համար կեանքի արդարութիւն ձեռք բերել ու զայն մեզի վերադարձնել:

Ա Պետ. 3:18, Գործք 2:24, Եսա. 53:8, Ա Յովհ. 1:2, Երեմ. 23:6, Բ Տիմ. 1:10, Յովհ. 6:51.

Հարցում 18. Ուրեմն, ո՞վ է այս միջնորդը, որ մէկ անձի մէջ թէ՛ ճշմարիտ Աստուած է, թէ՛ ճշմարիտ եւ արդար մարդ:

Պատասխան. Մեր Տէր Յիսուս Քրիստոսը, «որ մեզի համար Աստուծմէ իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն եւ փրկութիւն (փրկանաւորութիւն, կամ փրկանք)* եղաւ»:

Մատթ. 1:23, Ա Տիմ. 3:16, Ղուկ. 2:11, Ա Կորնթ. 1:30.

[*] Այս համարը Ա Կորնթացիս 1:30-էն առնուած է, որուն բնագրին մէջ «փրկութիւն» բառին փոխարէն կը գործածուի «փրկանաւորութիւն», այսինքն փրկագին մը կամ փրկանք մը վճարելով վերագնում կամ ապատում: Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան, *Նոր Բառգիրք Հայկապեան Լեզուի*, Վենետիկ. Սուրբ Ղազար, 1836, 1837: Անգլերէն՝ **Redemption**, լատիներէն՝ **Redemptio**, յունարէն՝ *ἀπολύτρωσις*: Հաւանաբար, ժողովուրդին համար աւելի ծանօթ բառ մը գործածելու սիրոյն, թարգմանիչները այս փոփոխութիւնը ըրած են:

Հարցում 19. Ասիկա ինչպէ՞ս գիտես:

Պատասխան. Սուրբ Աւետարանէն, զոր Աստուած ինք յայտնեց նախ դրախտին մէջ եւ անկէ ետք յայտարարեց սուրբ նահապետներուն եւ մարգարէներուն միջոցով ու նախածանուցանեց զոհերով եւ օրէնքին ուրիշ ծէսերով ու վերջապէս կատարեց իր միածին Որդւոյն Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

Ծն. 3:15, 22:17-18, 28:14, Հռովմ. 1:2, Եբր. 1:1, Յովհ. 5:46, Եբր. 10:7-8, Հռովմ. 10:4, Եբր. 13:8.

Հարցում 20. Ուրեմն, բոլո՞ր մարդիկ, ինչպէս Ադամով կորուստի մատնուեցան, նոյնպէս Քրիստոսով կը փրկուին:

Պատասխան: Ո՛չ: Այլ միայն կը փրկուին անոնք, որոնք Քրիստոսի մէջ պատուաստուած են եւ բոլոր իր բարիքները կը ստանան հաւատքով:

Մատթ. 1:21, Եսա. 53:11, Յովհ. 1:12-13, Հռովմ. 11:20, Եբր. 10:39.

Հարցում 21. Ի՞նչ է ճշմարիտ հաւատք:

Պատասխան: Ճշմարիտ հաւատքն է ո՛չ միայն վստահ գիտութիւնը, որով ես, որպէս ճշմարտութիւն կը պահեմ ամէն այն բաները, որոնք Աստուած իր խօսքին մէջ մեզի յայտնած է, այլ նաեւ՝ ապահով վստահութիւնը, որ Սուրբ Հոգին սրտիս մէջ ներգործած է Աւետարանին միջոցաւ, թէ ո՛չ միայն ուրիշներուն, այլ նաեւ ինծի մեղքերու

թողութիւն, յաւիտենական արդարութիւն եւ փրկութիւն
ձրիօրէն տրուած են Աստուծոյ կողմէ, լոկ իր շնորհքով,
միայն Քրիստոսի արժանիքներուն պատճառաւ:

Յովհ. 6:69, 17:3, Եբր. 11:3, 6, Եփես. 3:12, Հռովմ. 4:16, 20-21, Եբր. 11:1,
Եփես. 3:12, Հռովմ. 1:16, Ա Կորնթ. 1:21, Գործք 16:14, Մատթ. 16:17,
Յովհ. 3:5, Հռովմ. 10:14, 17, Մատթ. 9:2, Հռովմ. 5:1, Գաղ. 2:20, Հռովմ.
3:24-26

Հարցում 22. Քրիստոնէայ մը ի՞նչ պէտք է հաւատայ:

Պատասխան. Բոլոր այն բաները, որոնք մեզի խոստացուած
են աւետարանին մէջ, ու մեր ընդհանրական
անկասկածելի քրիստոնէական հաւատքի կէտերը մեզի
ամփոփ կերպով կը սորվեցնեն:

Յովհ. 20:31, Մատթ. 28:19-20

Հարցում 23. Որո՞նք են այս կէտերը:

Պատասխան.

- Կը հաւատամ Ամենակալ Հայր Աստուծոյ, երկինքի եւ երկրի Արարիչին,
- Եւ Յիսուս Քրիստոսի, անոր միածին Որդւոյն, մեր Տիրոջ,
- Որ յղացուեցաւ Սուրբ Հոգիէն եւ ծնաւ կոյս Մարիամէն.
- Չարչարուեցաւ Պոնտացի Պիղատոսի իշխանութեան տակ,
խաչուեցաւ, մեռաւ եւ թաղուեցաւ. դժոխք իջաւ,
- Երրորդ օրը մեռելներէն յարութիւն առաւ,
- Երկինք համբարձաւ եւ Ամենակալ Հայր Աստուծոյ աջ կողմը
նստաւ,
- Ուրկէ պիտի գայ դատելու ողջերն ու մեռելները:
- Կը հաւատամ Սուրբ Հոգիին,
- Ընդհանրական Սուրբ Եկեղեցիին, սուրբերու հաղորդութեան,
- Մեղքերու թողութեան,
- Մարմինի յարութեան,
- Եւ յաւիտենական կեանքին: Ամէն:

Հարցում 24. Այս կետերը ինչպե՞ս բաժնուած են:

Պատասխան. Երեք մասերու. առաջին՝ Հայրն Աստուած եւ մեր ստեղծագործութիւնը. երկրորդ՝ Որդին Աստուած եւ մեր փրկանաւորութիւնը. երրորդ՝ Հոգին Սուրբն Աստուած եւ մեր սրբագործութիւնը:

Ծն. 1, Ա Պետ. 1:18-19, 21-22.

Հարցում 25. Քանի որ միայն մէկ Աստուած կայ, ինչո՞ւ Հօր, Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյ մասին կը խօսիս:

Պատասխան. Որովհետեւ Աստուած ինքզինքը այդպէս յայտնած է իր Խօսքին մէջ, որ այս երեք տարբեր անձնաւորութիւնները միակ ճշմարիտ եւ յաւիտենական Աստուածն են:

Բ Օր. 6:4, Ծն. 1:26, Եսա. 61:1, Յովհ. 14:16-17, Ա Յովհ. 5:7, Յովհ. 1:13, Մատթ. 28:19, Բ Կորնթ. 13:14.

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ ՅԱՂԱԳՍ ՀԱՅՐ ԱՍՏՈՒԾՈՅ

Հարցում 26. Ի՞նչ կը հասկնաս, երբ կ'ըսես. «Կը հաւատամ Ամենակալ Հայր Աստուծոյ, երկինքի եւ երկրի Արարիչին»:

Պատասխան. Որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի յաւիտենական Հայրը, որ ոչինչէն ստեղծեց երկինքն ու երկիրը եւ ամէն ինչ որ անոնց մէջն է, ու զանոնք կը պահէ ու կը կառավարէ իր յաւիտենական խորհուրդին եւ նախախնամութեան միջոցով, Քրիստոսի՝ իր Որդւոյն սիրոյն, իմ Աստուածս ու իմ Հայրս ալ է, որուն վրայ այնքան լիովին կ'ապաւինիմ, որ կասկած չ'ունիմ, թէ ան ինծի պիտի հայթայթէ ամէն բան, որ հոգիս եւ մարմինս հարկաւոր է, եւ աւելին, թէ որեւէ չարիք, որ ան իմ վրաս զրկէ այս արցունքներու հովիտին մէջ, ի նպաստ ինծի կը

դարձնէ, քանզի ան կարող է այս ընելու, ամենակարող Աստուած եւ կամեցող ու հաւատարիմ հայր մը ըլլալով:

Ծն. 1 եւ 2, Սաղ. 115:3, Մատթ. 10:29, Եբր. 1:3, Յովհ. 5:17, 1:12, 16, <ճովմ. 8:15-16, Գաղ. 4:5-6, Եփես. 1:5, Ա Յովվհ. 3:1, Սաղ. 55:22, Մատթ. 6:26, <ճովմ. 8:28, 4:21, 10:12, Մատթ. 6:26, 7:9-11.

Հարցում 27. «Աստուծոյ նախախնամութիւն» ըսելով ի՞նչ կը հասկնաս:

Պատասխան. Աստուծոյ ամենակալ եւ ամենուրեք զօրութիւնը, որով, որպէս թէ իր ձեռքով, ան կը պահէ ու կը կառավարէ երկինք, երկիր եւ բոլոր արարածները, այնպէս, որ բոյս եւ խոտ, անձրեւ ու երաշտ, պտղաբեր եւ անպտուղ տարիներ, սնունդ եւ ջուր, առողջութիւն եւ հիւանդութիւն, հարստութիւն եւ աղքատութիւն՝ բոլորը կու գան ո՛չ բախտի բերմամբ, այլ՝ իր հայրական ձեռքէն:

Գործք 17:25-28, Եբր. 1:3, Երեմ. 5:24, Գործք 14:17, Յովհ. 9:3, Առ. 22:2, Յոր. 1:21, Մատթ. 10:29-30, Եփես. 1:11.

Հարցում 28. Մեզի ի՞նչ օգուտ է գիտնալ, թէ Աստուած ամէն բան ստեղծած է եւ տակաւին իր նախախնամութեամբ պանոնք կը պահէ:

Պատասխան. Որ ձախորդութեան մէջ համբերող կարենանք ըլլալ եւ յաջողութեան պարագաներու մէջ՝ երախտագէտ. ու ամէն բանի մէջ, որ այսուհետեւ մեզի պատահի, մեր վստահութիւնը հաստատ դնենք մեր հաւատարիմ Աստուծոյ եւ Հօր վրայ, որ ո՛չ մէկ բան մեզ իր սերէն կրնայ պատել, քանզի բոլոր արարածները այնպէս իր ձեռքին մէջ են, որ առանց իր կամքին չեն կրնար նոյնիսկ շարժիլ:

<ճովմ. 5:3-6, Սաղ. 39:10, Բ Օր. 8:10, Ա Թեսաղ. 5:18, <ճովմ. 8:38-39, Յոր. 1:12, 2:6, Մատթ. 8:31, Եսա. 10:15.

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ
ՅԱՂԱԳՍ ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ

Հարցում 29. Ինչո՞ւ Աստուծոյ Որդին կը կոչուի Յիսուս, այսինքն՝ Փրկիչ:

Պատասխան. Որովհետեւ ան մեզ կը փրկէ եւ կ'ապատէ մեր մեղքերէն. նաեւ որովհետեւ ուրիշ մէկու մը մէջ փրկութիւն պէտք չէ փնտռենք. եւ ոչ ալ կրնանք ուրիշի մէջ գտնել:

Մատթ. 1:21, Գործք 4:12.

Հարցում 30. Անոնք, որոնք իրենց փրկութիւնն ու երանութիւնը կը փնտռեն սուրբերու մէջ, իրենց մէջ, կամ որեւէ ուրիշ բանի մէջ, Յիսուս Քրիստոսի կը հաւատա՞ն որպէս իրենց միակ Փրկիչը:

Պատասխան. Ո՛չ: Որովհետեւ անոնք Քրիստոսի վրայ կը պարծենան միայն խօսքով, մինչ իրենց գործերով պայն կ'ուրանան որպէս միակ Փրկիչը ու երանութիւն պարգեւողը, քանզի կա՛մ Յիսուս կատարեալ Փրկիչ չէ, կամ անոնք, որոնք ճշմարիտ հաւատքով այս Փրկիչը կ'ընդունին, պէտք է անոր մէջ գտնեն ամէն այն բաները, որոնք իրենց փրկութեան համար հարկաւոր են:

Ա Կորնթ. 1:13, 31, Գաղ. 5:4, Կող. 2:20, Եսա. 9:6-7, Գաղ. 1:19-20.

Հարցում 31. Ինչո՞ւ ան կը կոչուի Քրիստոս, այսինքն՝ Օծեալ:

Պատասխան. Որովհետեւ ան Հայր Աստուծմէ կարգուած եւ Սուրբ Հոգիով օծուած է մեր Մարգարէն եւ Ուսուցիչը ըլլալու համար, որ մեզի լիովին յայտնած է Աստուծոյ գաղտնի խորհուրդը եւ կամքը մեր փրկանաւորութեան նկատմամբ. մեր Քահանայապետը ըլլալու համար, որ իր մարմինը մէկ անգամ զոհելով՝ մեզ փրկանաւորեց եւ մեզի

համար Հօրը առջեւ յաւիտենապէս միջամտութիւն կ'ընէ.
նաեւ մեր յաւիտենական թագաւորը ըլլալու համար, որ մեզ
կը կառավարէ իր Խօսքով ու իր Հոգիով եւ մեզ կը
պաշտպանէ ու կը պահէ այդ փրկանաւորութեան մէջ, զոր
ան մեզի համար գնեց:

Եբր. 1:9, Բ Օր. 18:18, Գործք 3:22, Յովհ. 1:18, 15:15, Մատթ. 11:27, Սաղ.
110:4, Եբր. 7:21, 10:14, Հռովմ. 8:34, Սաղ. 2:6, Ղուկ. 1:33, Մատթ. 28:18,
Յովհ. 10:28.

Հարցում 32. Բայց դուն ինչո՞ւ քրիստոնեայ կը կոչուիս:

Պատասխան. Որովհետեւ հաւատքով Քրիստոսի անդամ մըն
եմ եւ այսպէսով իր օծման հաղորդ, որ ես ալ կարենամ իր
անունը դաւանիլ եւ ինքզինքս մատուցանեմ որպէս
գոհութեան կենդանի զոհ մը. նաեւ որ ազատ ու բարի
խիղճով կարենամ այս կեանքին մէջ մեղքին ու
Սատանային դէմ պայքարիլ ու անկէ ետք Քրիստոսի հետ
կարենամ յաւիտեան թագաւորել բոլոր արարածներուն
վրայ:

Ա Կորնթ. 6:15, Ա Յովհ. 2:27, Յովէլ. 2:28, Մատթ. 1:32, Հռովմ. 12:1,
Եփես. 6:11-12, Ա Տիմ. 1:18-19, Բ Տիմ. 2:12.

Հարցում 33. Ինչո՞ւ Քրիստոս Աստուծոյ Միածին Որդին կը
կոչուի, քանի որ մենք ալ Աստուծոյ որդիներ ենք:

Պատասխան. Որովհետեւ միայն Քրիստոս Աստուծոյ
յաւիտենական եւ բնական Որդին է, իսկ մենք Աստուծոյ
որդեգրուած զաւակներ ենք, շնորհքով, Քրիստոսի սիրոյն
համար:

Յովհ. 1:1, Եբր. 1:2, Հռովմ. 8:15-17, Եփես. 1:5-6.

Հարցում 34. Ինչո՞ւ զայն «մեր Տէրը» կը կոչես:

Պատասխան. Որովհետեւ ան թէ՛ մեր հոգին, թէ՛ մեր մարմինը
փրկանաւորած է բոլոր մեր մեղքերէն, ո՛չ ոսկիով կամ

արծաթով, այլ՝ իր թանկագին արիւնով եւ մեզ ապատած է Սատանայի զօրութենէն. եւ այսպէս ան մեզ իր սեփականութիւնը ըրած է:

Ա Պետ. 1:18-19, Ա Կորնթ. 8:20.

Հարցում 35. Ի՞նչ է այս բառերուն նշանակութիւնը՝ «Ան յղացուեցաւ Սուրբ Հոգիէն եւ ծնաւ կոյս Մարիամէն»:

Պատասխան. Որ Աստուծոյ յաւիտենական Որդին, որ է եւ կը շարունակէ ըլլալ ճշմարիտ եւ յաւիտենական Աստուած, իր վրայ առաւ իրական մարդկային բնութիւն կոյս Մարիամի մարմինէն եւ արիւնէն, Սուրբ Հոգւոյն գործողութեամբ, որպէսզի ան կարենար ըլլալ նաեւ Դաւիթի ճշմարիտ սերունդը, ամէն բանի մէջ իր եղբայրներուն պէս, բացի մեղքէն:

Յովհ. 1:1, Կող. 1:15, Սաղ. 2:7, Ա Յովհ. 5:20, Յովհ. 1:14, Գաղ. 4:4, Մատթ. 1:18, Ղուկ. 1:35, Սաղ. 132:2, Գործք 2:30, Հռովմ. 1:3, Փիլիպ. 2:7, Եբր. 4:15.

Հարցում 36. Դուն ի՞նչ օգուտ կը ստանաս Քրիստոսի սուրբ յղացումէն եւ ծնունդէն:

Պատասխան. Որ ան մեր միջնորդն է, եւ իր անմեղութեամբ Աստուծոյ առջեւ կը ծածկէ մեղքերս, որոնց մէջ յղացուեցայ եւ ծնայ:

Եբր. 2:16-17, Սաղ. 32:1, Ա Կորնթ. 1:30, Հռովմ. 8:34.

Հարցում 37. Ի՞նչ կը հասկնաս այս բառերէն՝ «Ան չարչարուեցաւ»:

Պատասխան. Որ ան ամբողջ ժամանակին ընթացքին, որ երկրի վրայ ապրեցաւ, բայց մասնաւորաբար իր կեանքին վերջաւորութեան, իր մարմինին ու հոգիին մէջ կրեց Աստուծոյ բարկութիւնը ամբողջ մարդկութեան մեղքերուն դէմ, որպէսզի իր չարչարանքին միջոցաւ, որպէս

քառութեան միակ զոհը, կարենար մեր մարմինները ու հոգիները փրկանաւորել յաւիտենական անէծքէն եւ մեզի համար ստանար Աստուծոյ շնորհքը, արդարութիւն եւ յաւիտենական կեանք:

Ա Պետ. 2:24, Եսա. 53:12, Ա Յովհ. 2:2, Հռովմ. 3:25.

Հարցում 38. Ինչո՞ւ ան չարչարուեցաւ Պոնտացի Պիղատոսի դատաւորութեան տակ:

Պատասխան. Որպէսզի ան, անմեղ ըլլալով, բայց եւ այնպէս երկրաւոր դատաւորի մը կողմէ դատապարտուելով, կարենար մեզ ապատել Աստուծոյ խիստ դատաստանէն, որուն դատապարտուած էինք:

Ղուկ. 23:14, Յովհ. 19:4, Սաղ. 69:4, Գաղ. 3:13-14.

Հարցում 39. Իր խաչուիլը որեւէ ուրիշ նշանակութիւն ունի՞, որ ուրիշ տեսակ մահով մը մեռնելէն կը տարբերի:

Պատասխան. Այո՛: Անով ինծի կը վստահեցուի, թէ ան իր վրայ առաւ այն անէծքը, որ իմ վրաս կար, քանզի խաչին մահը Աստուծմէ անիծուած էր:

Բ Օր. 21:23, Գաղ. 3:13.

Հարցում 40. Ինչո՞ւ պէտք էր, որ Քրիստոս ինքզինքը մինչեւ իսկ մահուան խոնարհեցնէր:

Պատասխան. Որովհետեւ, ըստ Աստուծոյ արդարութեան եւ ճշմարտութեան՝ կարելի չէր մեր մեղքերուն համար հատուցում ընել որեւէ տարբեր կերպով, բացի Աստուծոյ Որդւոյն մահուամբ:

Ծն. 2:17, Եբր. 2:9-10, Փիլիպ. 2:8.

Հարցում 41. Ինչո՞ւ նաեւ «թաղուեցաւ»:

Պատասխան. Ապացուցանելու համար, թէ իրապէս մեռած էր:

Գործք 13:29, Մարկ. 15:43, 46.

Հարցում 42. Ուրեմն, քանզի Քրիստոս մեզի համար մեռաւ, ինչո՞ւ մենք ալ պէտք է մեռնինք:

Պատասխան. Մեր մահը մեր մեղքին համար հատուցում չէ, այլ՝ միայն մեղքի բնաջնջումը եւ մեր յաւիտենական կեանքին անցնիլը:

Յովհ. 5:24, Փիլիպ. 1:23,

Հարցում 43. Ի՞նչ յաւելեալ բարիք կը ստանանք Քրիստոսի գոհուելէն ու խաչին վրայ մեռնելէն:

Պատասխան. Որ անոր զօրութեամբ մեր «հին մարդ»-ը Քրիստոսի հետ խաչուած, մեռած ու թաղուած է, որպէսզի այսպէսով մարմինին ապականած ձգտումները մեր վրայ չկարենան իջիւել, այլ մենք կարենանք մեր անձերը իրեն մատուցանել որպէս գոհութեան պատարագ մը:

Հռովմ. 6:6-12, Հռովմ. 12:1.

Հարցում 44. Ինչո՞ւ կ'աւելցուի «դժողք իջաւ»:

Պատասխան. Որպէսզի իմ մեծագոյն փորձութիւններուս մէջ կարենամ ապահով գիտնալ, թէ իմ Տէրս՝ Յիսուս Քրիստոս, իր անպատմելի տառապանքներուն, ցաւերուն եւ վարհուրանքներուն միջոցաւ, որոնք իր չարչարանքներուն ընթացքին եւ մասնաւորաբար խաչին վրայ կրեց իր հոգւոյն մէջ, զիս ապատեց դժողքի արհաւիրքներէն եւ տանջանքներէն:

Եսա. 53:10, Մատթ. 27:46.

Հարցում 45. Քրիստոսի յարութիւնը մեզի ի՞նչ օգուտ կը բերէ:

Պատասխան. Առաջին, ան իր յարութեամբ մահը յաղթեց, որ մեզ կցորդ ընէր այն արդարութեան, որ մեզի համար գնեց իր մահով. երկրորդ, իր զօրութեամբ մենք ալ նոր կեանքի մը յարութիւն կ'առնենք, եւ վերջապէս, Քրիստոսի յարութիւնը մեր յարութեան ապահով խոստումնագիրն է:

Ա Կորնթ. 15:16, Հռովմ. 6:4, Կող. 3:1-4, Ա Կորնթ. 15, Հռովմ. 8:11.

Հարցում 46. Ինչպէ՞ս կը հասկնաս այս խօսքերը՝ «երկինք ելաւ»:

Պատասխան. Որ Քրիստոս իր աշակերտներուն աչքին առջեւ երկրէն դէպի երկինք համբարձաւ եւ մեր բարիքին համար հոն է, մինչեւ որ ետ գայ ողջերը ու մեռելները դատելու համար:

Գործք 1:9, Մարկ. 16:19, Եբր. 4:14, Հռովմ. 8:34, Եփես. 4:10.

Հարցում 47. Ուրեմն Քրիստոս, իր խոստումին համեմատ, մինչեւ աշխարհին վերջը մեզի հետ չէ՞:

Պատասխան. Քրիստոս լիակատար մարդ է, նաեւ լիակատար Աստուած: Ուրեմն, ըստ իր մարդակային բնութեան, այլեւս երկրի վրայ չէ. սակայն, ըստ իր աստուածային բնութեան, իր վեհութեամբ, շնորհքով եւ Հոգիով, ան երբեք մեզմէ բացակայ չէ:

Գործք 3:21, Յովհ. 3:13, Յովհ. 16:28, Մատթ. 28:20.

Հարցում 48. Բայց եթէ իր մարդկային բնութիւնը ներկայ չէ ամէն տեղ, ուր իր աստուածային բնութիւնը կը գտնուի,

ուրեմն Քրիստոսի երկու բնութիւնները իրարմէ զատուած չե՞ն:

Պատասխան. Երբե՛ք: Քանզի աստուածային բնութիւնը անսահման է եւ ամենուրեք, պէտք է անպայման հետեւցուի, թէ ան իր վրայ առած մարդկային սահմանները կը գերազանցէ եւ, այսու հանդերձ, այդ մարդկային բնութեան մէջ է եւ անձնապէս անոր միացած կը մնայ:

Գործք 7:49, Մատթ. 24:30, 28:30, Յովհ. 16:28, 17:11, 3:13

Հարցում 49. Յիսուսի համբարձումը մեզի ի՞նչ օգուտ է:

Պատասխան. Առաջին, որ ան մեր բարեխօսն է իր Երկնաւոր Հօր առջեւ. երկրորդ, թէ ան, մեր մարմինէն՝ մարմին, երկինքի մէջ մեր հաստատ երաշխիքն է, թէ ան, որպէս գլուխը, մեզ ալ, այսինքն՝ իր անդամները, իր քովը պիտի առնէ երկինքի մէջ. երրորդ, որ ան մեզի կը ղրկէ իր Հոգին, որպէս հաւաստիք, որու զօրութեամբ կը փնտռենք վերի բաները, ուր Քրիստոս է, Աստուծոյ աջ կողմը նստած, եւ ո՛չ այս երկրին վրայիները:

Եբր. 9:24, Ա Յովհ. 2:2, Հռովմ. 8:34, Յովհ. 14:2, 16, Եփես. 2:6, Բ Կորնթ. 1:22, 5:5, Կող. 3:1, Փիլիպ. 3:20.

Հարցում 50. Ինչո՞ւ կ'աւելցուի. «Եւ Աստուծոյ աջ կողմը նստաւ»:

Պատասխան. Որովհետեւ Քրիստոս այս նպատակին համար երկինք համբարձաւ, որպէսզի ան որպէս իր եկեղեցիին գլուխը ներկայանար, եւ Հայրը ամէն բան իր միջոցով կառավարէր:

Եփես. 1:20-22, Կող. 1:18, Մատթ. 28:18, Յովհ. 5:22.

Հարցում 51. Քրիստոսի՝ մեր Գլուխին այս փառքը մեզի ի՞նչ օգուտ է:

Պատասխան. Առաջին, որ ան իր Սուրբ Հոգիին միջոցով իր անդամներուն վրայ երկնային պարգևներ կը տեղացնէ. երկրորդ, որ իր պօրութեամբ բոլոր թշնամիներուն դէմ մեզ կը պաշտպանէ ու կը պահէ:

Եփես. 4:8, Սաղ. 2:9, Յովհ. 10:28

Հարցում 52. Ի՞նչ մխիթարութիւն է քեզի համար, որ Քրիստոս նորէն պիտի գայ ողջերը եւ մեռածները դատելու:

Պատասխան. Որ բոլոր իմ թախիծներու եւ հալածանքներու մէջ, գլուխս բարձրացած կը սպասեմ, որ այդ նոյն անձը, որ անցեալին ինքզինքը ինծի համար Աստուծոյ ատեանին ընծայեց եւ ամէն անէծք ինձմէ վերցուց, երկինքէն ետ գայ որպէս Դատաւոր: Ան իր եւ իմ բոլոր թշնամիները պիտի նետէ յաւիտենական դատապարտութեան մէջ. բայց զիս բոլոր իր ընտրեալներուն հետ իր քով պիտի առնէ, երկնային ուրախութեան եւ փառքի մէջ:

Ղուկ. 21:28, Հռովմ. 8:23-24, Ա Թեսաղ. 4:16, Բ Թեսաղ. 1:6-69, Մատթ. 25:41, 34.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ ՅԱՂԱԳՍ ՍՈՒՐԲ ՀՈԳԻ ԱՍՏՈՒԾՈՅ

Հարցում 53. Սուրբ Հոգիին վերաբերեալ հաւատքդ ի՞նչ է:

Պատասխան. Առաջին, որ ան, Հօրն ու Որդւոյն հետ եւ անոնց հաւասար, ճշմարիտ, նոյնպէս յաւիտենական Աստուած է. երկրորդ, որ ան նաեւ ինծի տրուած է ու զիս ճշմարիտ հաւատքի միջոցաւ Քրիստոսի ու իր բոլոր բարիքներուն կցորդ կ'ընէ, զիս կը մխիթարէ ու յաւիտենապէս ինծի հետ կը բնակի:

Ծն. 1:2, Եսա. 48:16, Ա Կորնթ. 3:16, Մատթ. 28:19, Բ Կորնթ. 1:22, Գաղ. 3:14, Ա Պետ. 1:2, 4:14, Գործք 9:31, Յովհ. 14:16

Հարցում 54. Քրիստոսի «սուրբ, ընդհանրական եկեղեցի»-ին վերաբերեալ հաւարքդ ի՞նչ է:

Պատասխան. Որ Աստուծոյ Որդին, աշխարհի սկիզբէն մինչեւ աշխարհի վերջը, կը հաւաքէ, կը պաշտպանէ եւ կը պահէ իրեն համար, իր Հոգիով ու իր Խօսքով, ամբողջ մարդկային ցեղէն եկեղեցի մը, ընտրուած յաւիտենական կեանքի համար, ճշմարիտ հաւատքի միաբանութեան մէջ, որուն ես եմ ու յաւիտեան պիտի ըլլամ կենդանի անդամ մը:

Յովհ. 10:11, 16, Ծն. 26:4, Հռովմ. 9:24, Եփես. 1:10, Եսա. 59:21, Բ Օր. 10:14-15, Գործք 14:38, Ա Կորնթ. 1:8-9, Հռովմ. 8:32-39.

Հարցում 55. «Սուրբերու հաղորդութիւն» ըսելով ի՞նչ կը հասկնաս:

Պատասխան. Առաջին, որ բոլոր հաւատացեալները եւ անոնցմէ իւրաքանչիւրը Քրիստոսի անդամներ ըլլալով, հաղորդակից են Քրիստոսի եւ բոլոր իր գանձերուն ու պարգեւներուն. երկրորդ, որ ամէն մէկը պէտք է գիտնայ, թէ իր պարտքն է իր պարգեւները գործածել յօծարութեամբ եւ ուրախութեամբ ուրիշ անդամներու օգուտին եւ փրկութեան համար:

Յովհ. 1:3-4, Հռովմ. 8:32, Ա Կորնթ. 12:13, 13:5, Փիլիպ. 2:4-6.

Հարցում 56. «Մեղքերու թողութեան» վերաբերեալ ի՞նչ կը հաւատաս:

Պատասխան. Որ Աստուած, Քրիստոսի հատուցման պատճառաւ, ալ պիտի չյիջէ մեղքերս, ոչ ալ՝ մեղանչական բնութիւնս, որուն դէմ պէտք է պայքարիմ ամբողջ կեանքիս ընթացքին, այլ իր շնորհքով Քրիստոսի

արդարութիւնը ինծի պիտի վերագրէ, որպէսզի ես երբեք չդատապարտուիմ Աստուծոյ ատեանին առջեւ:

Ա Յովհ. 2:2, Բ Կորնթ. 5:19, 21, Երեմ. 31:34, Սաղ. 103:3-4, 10-11, Հռովմ. 8:1-3, Յովհ. 3:18.

Հարցում 57. «Մարմինի յարութիւնը»-ը քեզի ի՞նչ մխիթարութիւն կու տայ:

Պատասխան. Որ ո՛չ միայն հոգիս այս կեանքէն ետք անմիջապէս վեր պիտի առնուի Քրիստոսի՝ այսինքն Գլուխին քով, այլ նաեւ մարմինս, Քրիստոսի պօրութեամբ յարուցուած, հոգիս պիտի միանայ եւ Քրիստոսի փառաւոր մարմինին նման պիտի ըլլայ:

Ղուկ. 23:43, Փիլիպ. 1:23, Ա Կորնթ. 15:53, Յոբ. 19:25-26.

Հարցում 58. Ի՞նչ մխիթարութիւն կը ստանաս «յաւիտենական կեանքին» հաւատքէն:

Պատասխան. Թէ որովհետեւ հիմա սրտիս մէջ կը պզամ յաւիտենական ցնծութեան սկիզբը, այս կեանքէն ետք պիտի ժառանգեմ կատարեալ փրկութիւն, որ «աչք չէ տեսած, ականջ չէ լսած, ոչ ալ մարդու սրտի մէջ է մտած», հոն յաւիտենապէս պԱստուած փառաւորելու համար:

Բ Կորնթ. 5:2-3, 6, Հռովմ. 14:17, Սաղ. 10:11, Ա Կորնթ. 2:9.

Հարցում 59. Բայց քեզի ի՞նչ օգուտ է հիմա այս բաները հաւատալը:

Պատասխան. Թէ ես Քրիստոսի մէջ արդար եմ Աստուծոյ առջեւ եւ յաւիտենական կեանքի ժառանգորդ:

Հռովմ. 1:17, 5:1, Յովհ. 3:36.

Հարցում 60. Դուն ինչպէ՞ս արդար ես Աստուծոյ առջեւ:

Պատասխան. Միայն Յիսուս Քրիստոսի վրայ ճշմարիտ հաւատքով. այնպէս, որ թէեւ խիղճս զիս յանդիմանէ, որ ես մեծապէս մեղանշած եմ Աստուծոյ բոլոր պատուիրանքներուն դէմ եւ անոնց ոչ մէկը պահած եմ ու տակաւին ամէն չարութեան հակամէտ եմ, ասով հանդերձ, Աստուած, առանց որեւէ արժանիքիս, սոսկ իր շնորհքով, կը պարգեւէ եւ ինծի կը վերագրէ Քրիստոսի կատարեալ հատուցումը, արդարութիւնը եւ սրբութիւնը, որպէս թէ ես երբեք մեղք չունենայի ու որպէս թէ ես լիովին կատարած ըլլայի ամբողջ այն հնապանդութիւնը, որ Քրիստոս իմ փոխարէնս կատարեց, եթէ ես այդ բարիքը հաւատացող սրտով ընդունիմ:

Հռովմ. 3:9, 22-28, 7:23, 4:4-5, Գաղ. 2:16, Եփես. 2:8-9, Տիմոս 3:5, Բ Կորնթ. 5:19, 21, Ա Յովհ. 2:1, Յովհ. 3:18

Հարցում 61. Ինչո՞ւ կ'ըսես, թէ դուն միայն հաւատքով արդար ես:

Պատասխան. Ո՛չ, թէ ես Աստուծոյ ընդունելի եմ իմ հաւատքիս արժանիքին պատճառաւ, այլ միայն Քրիստոսի հատուցումը, արդարութիւնը ու սրբութիւնը իմ արդարութիւնս են Աստուծոյ առջեւ, եւ ես չեմ կրնար պանոնք ընդունիլ ու ինծի կիրարկել ուրիշ որեւէ միջոցով, այլ՝ միայն հաւատքով:

Սաղ. 16:2, Եփես. 2:8-9, Ա Կորնթ. 1:30, 2:2, Ա Յովհ. 5:10.

Հարցում 62. Բայց ինչո՞ւ մեր բարի գործերը չեն կրնար Աստուծոյ առջեւ մեր արդարութիւնը կամ մեր արդարութեան մէկ մասը ըլլալ:

Պատասխան. Որովհետեւ, այն արդարութիւնը, որ Աստուծոյ ատեանին առջեւ ընդունելի է, պէտք է բացարձակօրէն կատարեալ ըլլայ ու ամէն կերպով Աստուծոյ օրէնքին համակերպի. նաեւ, որովհետեւ մեր լաւագոյն գործերը այս կեանքին մէջ անկատար են ու մեղքով պղծուած:

Գաղ. 3:10, Բ Օր. 27:26, Եսա. 64:6.

Հարցում 63. Այդ ինչպե՞ս կրնայ ըլլալ: Մեր բարի գործերը արժեք մը չունի՞ն, որ Աստուած պանոնք վարձատրէ թե՛ այս կեանքին մէջ, թե՛ ապագայ կեանքին մէջ:

Պատասխան. Այդ վարձատրութիւնը շնորհքով է ու ո՛չ արժանիքով:

Ղուկ. 17:10.

Հարցում 64. Բայց այս վարդապետութիւնը մարդիկ անհոգ եւ ապիրատ չի՞ ըներ:

Պատասխան. Երբե՛ք: Որովհետեւ անկարելի է, թէ անոնք, որոնք ճշմարիտ հաւատքով Քրիստոսի մէջ պատուաստուած են, երախտագիտութեան պտուղներ յառաջ չբերեն:

Մատթ. 7:17-18, Յովհ. 15:5.

ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ ՅԱՂԱԳՍ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՆ

Հարցում 65. Քանի որ մենք միայն հաւատքով Յիսուսի եւ իր բոլոր բարիքներուն հաղորդ կ'ըլլանք, այս հաւատքը ուրկե՞ կու գայ:

Պատասխան. Սուրբ Հոգիէն, որ մեր սրտերուն մէջ հաւատք կը ներգործէ Աւետարանին քարոզութեան միջոցով ու կը հաստատէ Սուրբ Խորհուրդներուն միջոցով:

Եփես. 2:8, 6:23, Փիլիպ. 1:29, Մատթ. 28:19, Հռովմ. 4:11.

Հարցում 66. Ի՞նչ են Սուրբ Խորհուրդները:

Պատասխան. Սուրբ Խորհուրդները սուրբ տեսանելի նշաններ եւ կնիքներ են Աստուծոյ կողմէ սահմանուած այս նպատակին համար. որ ան, անոնց գործածութեամբ, աւելի լիօրէն յայտարարէ եւ կնքէ Աւետարանին խոստումը. այսինքն, որ Աստուած, խաչին վրայ Քրիստոսի կատարած միակ զոհին պատճառաւ, մեզի ձրիօրէն մեղքերու թողութիւն եւ յաւիտենական կեանք կը պարգեւէ:

Ծն. 17:11, Հռովմ. 4:11, Ղեւտ. 6:25, Գործք 22:16, 2:38, Մատթ. 26:28.

Հարցում 67. Ուրեմն երկո՞ւքն ալ, թէ՛ խօսքը, թէ՛ Սուրբ Խորհուրդները, կարգադրուած ու սահմանուած են այս նպատակին համար, որ մեր հաւատքը առաջնորդեն խաչին վրայ Յիսուս Քրիստոսի կատարած զոհին, որպէս մեր փրկութեան միակ հիմը եւ միջոցը:

Պատասխան. Այո՛, քանզի Սուրբ Հոգին Աւետարանին մէջ մեզի կը սորվեցնէ եւ Սուրբ Խորհուրդներուն մէջ մեզի կը հաստատէ, թէ մեր փրկութեան ամբողջութիւնը կախեալ է այդ մէկ զոհէն, որ Քրիստոս խաչին վրայ մատուցանեց մեզի համար:

Հռովմ. 6:3, Գաղ. 3:27.

Հարցում 68. Քանի՞ հատ Սուրբ Խորհուրդներ հաստատուած են Նոր Կտակարանին մէջ:

Պատասխան. Երկու. այսինքն, Սուրբ Մկրտութիւն եւ Տէրունական Ընթրիք:

Ա Կորնթ. 10:24

**ԵՕԹՆԵՐՈՐԴ ՄԱՍ
ՅԱՂԱԳՍ ՍՈՒՐԲ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ**

Հարցում 69. Սուրբ Մկրտությունը ինչպե՞ս քեզի կը յորդորէ եւ կը վստահեցնէ, թէ խաչին վրայ կատարուած Քրիստոսի մէկ զոհը իրապէս քեզի օգուտ է:

Պատասխան. Այսպէս. որ Քրիստոս հաստատեց արտաքնապէս ջուրով լուացուիլը, անոր կցելով խոստումը, թէ ես իր արիւնով ու իր Հոգիով իմ հոգիիս ամբողջ պղծութենէն, այսինքն՝ իմ բոլոր մեղքերէս, լուացուած եմ այնքան ստուգիւ, որքան արտաքնապէս լուացուած եմ ջուրով, որով սովորաբար մարմինին աղտոտութիւնը կը լուացուի:

Մատթ. 3:11, 28:19, Մարկ. 1:4, 16:16, Գործք 2:38, Հռովմ. 6:3, Ղուկ. 3:3.

Հարցում 70. Ի՞նչ է Քրիստոսի արիւնով եւ Հոգիով լուացուիլը:

Պատասխան. Աստուծմէ մեղքերու թողութիւն ստանալն է, որպէս շնորհք, Քրիստոսի արեան սիրոյն, զոր իր զոհով խաչին վրայ մեզի համար թափեց. նաեւ Սուրբ Հոգիէն նորոգուիլն ու սրբացուիլն է Քրիստոսի անդամներ ըլլալու համար, որ այնպէս կարենանք ա՛լ աւելի մեղքին մեռնիլ եւ սուրբ ու անմեղադրելի կեանքեր վարել:

Եբր. 12:24, Ա Պետ. 1:2, Յովհ. 1:33, Հռովմ. 6:4, Կող. 2:11.

Հարցում 71. Քրիստոս մեզի ո՞ր խոստացաւ, թէ ան նոյնպէս անկասկածօրէն մեզ պիտի լուայ իր արիւնով եւ իր Հոգիով, ինչպէս մկրտութեան ջուրով կը լուացուինք:

Պատասխան. Մկրտութեան հաստատութեան մէջ, որ ան այսպէս արտայայտեց. «Ուրեմն գացէ՛ք բոլոր ազգերը աշակերտեցէ՛ք, մկրտեցէ՛ք զանոնք յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:» «Ան որ հաւատայ ու մկրտուի՝ պիտի փրկուի եւ ան որ չհաւատայ՝ պիտի դատապարտուի:» Այս

խոստումը կը կրկնուի նաեւ հոն, ուր Աստուածաշունչը մկրտութիւնը կը կոչէ «նորէն ծնանելու աւազան»-ը եւ «մեղքերը լուալ»-ը:

Մատթ. 28:19, Մարկ. 16:16, Տիտոս 3:5, Գործք 22:16.

Հարցում 72. Ուրեմն ջուրով արտաքին մկրտութիւնը բուն մեղքերու լուալն է:

Պատասխան. Երբե՛ք: Քանզի միայն Յիսուս Քրիստոսի արիւնը եւ Սուրբ Հոգին մեզ ամէն մեղքէ կը մաքրեն:

Մատթ. 3:11, Ա Պետ. 3:21, Ա Յովհ. 1:7, Ա Կորնթ. 6:11.

Հարցում 73. Ուրեմն ինչո՞ւ Սուրբ Հոգին մկրտութիւնը կը կոչէ «նորէն ծնանելու աւազան»-ը եւ «մեղքերը լուալ»-ը:

Պատասխան. Աստուած վայս չ'ըսեր առանց մեծ պատճառի. այսինքն, ո՛չ միայն մեզի սորվեցնելու համար, թէ այնպէս ինչպէս մարմինի աղտոտութիւնը ջուրով կը մաքրուի, նոյնպէս մեր մեղքերը կը վերցուին Յիսուս Քրիստոսի արիւնով եւ Հոգիով, այլ նաեւ ու մասնաւորաբար, թէ այս աստուածային խոստումով ու նշանով ան մեզի կը վստահեցնէ, թէ մենք հոգեւորապէս լուացուած ենք մեր մեղքերէն այնքան իրականօրէն, որքան արտաքինապէս ջուրով կը լուացուինք:

Յայտ. 1:5, Ա Կորնթ. 6:11, Մարկ. 16:16, Գաղ. 3:27.

Հարցում 74. Մանուկներն ալ պետք է մկրտուին:

Պատասխան. Այո՛. քանզի անոնք, չափահասներուն նման, Աստուծոյ ուխտին ու եկեղեցիին կը պատկանին, եւ քանզի Քրիստոսի արիւնով փրկանաւորութիւնը եւ Սուրբ Հոգին, որ հաւատք կը ներգործէ, մանուկներուն ալ խոստացուած են ո՛չ նուազ քան չափահասներուն. անոնք

ալ մկրտութեան միջոցով, որպէս ուխտին նշանը, պէտք է ընդունուին Քրիստոնէական Եկեղեցիին մէջ եւ անհաւատներու զաւակներէն զանապանուին, ինչպէս կ'ըլլար Հին Ուխտին մէջ թլփատութեամբ, որուն տեղը Նոր Ուխտին մէջ մկրտութիւնը հաստատուած է:

Ա Կորնթ. 7:14, 12:13, Յովէլ. 2:16, Մատթ. 19:14, Ղուկ. 1:14-15, Սաղ. 22:10, Գործք 2:39, 10:47, Ծն. 17:14, Կող. 2:11-13.

ՈՒԹԵՐՈՐԴ ՄԱՍ ՅԱՂԱԳՍ ՍՈՒՐԲ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՔԻՆ

Հարցում 75. Տէրունական Ընթրիքը քեզի ինչպէ՞ս կը յիշեցնէ եւ կը վստահեցնէ, թէ դուն Քրիստոսի խաչին վրայ կատարած միակ զոհին ու բոլոր իր բարիքներուն մասնակից ես:

Պատասխան. Այսպէս, թէ Քրիստոս ինձի եւ բոլոր հաւատացեալներուն պատուիրած է այս կտրուած հացէն ուտել եւ այս գաւաթէն խմել զինք յիշելու համար, այս խոստումները աւելցնելով. առաջին, թէ իր մարմինը խաչին վրայ մատուցուեցաւ եւ կտրուեցաւ ինձի համար ու իր արիւնը ինձի համար թափուեցաւ, այնքան ճշմարտապէս, որքան ես իմ աչքերովս կը տեսնեմ Տիրոջ հացը կտրուած ինձի համար եւ գաւաթը ինձի հաղորդուած. նաեւ, որ ան հոգիս կը կերակրէ ու կը սնուցանէ յաւիտենական կեանքի համար, իր խաչուած մարմինով ու իր թափած արիւնով, այնքան ստուգօրէն, որքան Տիրոջ հացը ու գաւաթը կը ստանամ Աստուծոյ ծառային ձեռքէն ու բերնովս կը ճաշակեմ, որպէս Քրիստոսի մարմինին եւ արեան ճշմարիտ նշաններ:

Մատթ. 26:28, Մարկ. 14:22-24, Ղուկ. 22:19-20, Ա Կորնթ. 10:16-17, 11:23-25.

Հարցում 76. Ուրեմն, ի՞նչ է Քրիստոսի խաչուած մարմինը ուտելը եւ իր թափած արիւնը խմելը:

Պատասխան. Ո՛չ միայն հաւատքի սրտով ընդունիլն է Քրիստոսի չարչարանքները եւ մահը, ու այդպէսով մեղքերու թողութիւն եւ յաւիտենական կեանք ունենալը, այլ նաեւ, ա՛յլ աւելի Քրիստոսի սուրբ մարմինին միանալն է, Սուրբ Հոգիին միջոցով, որ թե՛ Քրիստոսի մէջ կապրի, թե՛ մեր մէջ, որպէսզի, թէեւ Քրիստոս երկինքի մէջ կապրի եւ մենք երկրի վրայ, այսու հանդերձ, «իր մարմինէն մարմին ու իր ոսկորէն ոսկոր» ենք, եւ թէ մենք կ'ապրինք ու կը կառավարուինք յաւիտեան մէկ հոգիով, ինչպէս նոյն մարմինի անդամներ մէկ հոգիէ կը կառավարուին:

Յովհ. 6:35, 40, 47-54, 6:55-56, Գործք 1:9-11, 3:21, Ա Կորնթ. 6:15, 17, 19, 11:26, Եփես. 4:15-16, 5:29-32, Ա Յովհ. 3:24.

Հարցում 77. Քրիստոս ո՞ր խոստացած է, թէ ան նոյնքան ստուգօրէն հաւատացեալները պիտի կերակրէ եւ սնուցանէ, որքան անոնք կ'ուտեն այս կտրուած հացէն ու կը խմեն այս գաւաթէն:

Պատասխան. Ընթրիքին հաստատութեան մէջ, որ այսպէս կ'ըսէ. «Տէր Յիսուս իր մատնուած գիշերը հաց առաւ եւ գոհանալով՝ կտրեց ու ըսաւ. 'Առէ՛ք ու կերէ՛ք, այս է մարմինս որ ձեզի համար պիտի կտրուի. ասիկա ըրէք զիս յիշելու համար': Նոյնպէս ալ գաւաթը ընթրիքէն յետոյ առաւ ու ըսաւ. 'Այս գաւաթը նոր ուխտ է իմ արիւնովս. ասիկա ըրէք քանի անգամ որ խմելու ըլլաք՝ զիս յիշելու համար: Վասնզի քանի անգամ որ այս հացը ուտէք ու այս գաւաթը խմէք, Տէրոջը մահը պիտի պատմէք՝ մինչեւ ինք գայ:»: Այս խոստումը կը կրկնուի սուրբ առաքեալին՝ Պօղոսի կողմէ, որ կ'ըսէ. «Օրհնութեան գաւաթը՝ որ մենք կ'օրհնենք չէ՞ որ Քրիստոսին արեան հաղորդութիւնն է. հացը որ մենք կը կտրենք, չէ՞ որ Քրիստոսին մարմինին հաղորդութիւնն է: Քանզի մենք շատերս մէկ հաց մէկ մարմին ենք, վասնզի ամենքս ալ այդ մէկ հացէն կը վայելենք:»:

Մատթ. 26:26, Մարկ. 14:22, Ղուկ. 22:19, Ելից 13:9, 24:8, Եբր. 9:20, Ա Կորնթ. 10:16-17, 11:23, 26.

Հարցում 78. Ուրեմն հացն ու գինին Քրիստոսի բուն մարմինն են արիւնին կը վերածուի՞ն:

Պատասխան. Երբե՛ք: Այլ այնպէս, ինչպէս մկրտութեան մէջ ջուրը Քրիստոսի արիւնին չի վերածուիր, ոչ ալ լուացուիլը բուն մեղքին լուացուիլն է, այլ միայն անոր նշանը ու երաշխիքը Աստուծմէ հաստատուած, նոյնպէս Տէրունական Ընթրիքին մէջ հացը Քրիստոսի բուն մարմինն չի վերածուիր, թէեւ Սուրբ Խորհուրդներուն բնութեան եւ յատկանիշերուն համաձայն, կը կոչուի Յիսուս Քրիստոսի մարմինը:

Ա Կորնթ. 1:1-4, 16, 11:20, Ա Պետ. 3:21, Յովհ. 6:35, 62-63, Ծն. 17:10-11, 14, Ելից 12:26-27, 43, 48, Գործք 7:8, Մատթ. 26:26, Մարկ. 14:24.

Հարցում 79. Ուրեմն ինչո՞ւ Քրիստոս հացը կը կոչէ իր մարմինը, իսկ գաւաթը՝ իր արիւնը, կամ Նոր Ուխտը իր արիւնով, եւ Պօղոս կը կոչէ՝ «Քրիստոսի մարմինն ու արիւնին հաղորդութիւնը»:

Պատասխան. Քրիստոս այսպէս չ'ըսեր առանց մեծ պատճառի. այսինքն, այսպէսով ո՛չ միայն մեզի սորվեցնելու համար, թէ ինչպէս հացն ու գինին այս ժամանակաւոր կեանքը կը սնուցանեն, նոյնպէս իր խաչեալ մարմինը եւ թափած արիւնը ճշմարիտ միսն ու խմիչքն են, որոնցմով մեր հոգիները կը սնուցանուին յաւիտենական կեանքի համար, բայց աւելի մասնաւորաբար, որպէսզի այս տեսանելի նշաններով եւ խոստումներով մեզի վստահեցնէ, թէ մենք այնքան ճշմարտապէս իր բուն մարմինն ու արիւնն մասնակից ենք Սուրբ Հոգիին ներգործութեամբ, որքան մեր մարմիններուն բերաններովը կ'ընդունինք այս սուրբ նշանները զինք յիշելու համար, եւ թէ բոլոր իր չարչարանքները եւ հնազանդութիւնը այնքան ստոյգ կերպով մերն են, որքան պիտի ըլլային, եթէ մենք մեր անձերուն վրայ կրած ըլլայինք եւ մեր մեղքերուն համար Աստուծոյ հատուցում տուած ըլլայինք:

Յովհ. 6:51, 55-56, Ա Կորնթ. 10:16-17, 11:26-28, Եփես. 5:30, Հռովմ. 5:9, 18-19, 8:4.

Ծանօթութիւն. Հետեւեալ հարցումը՝ թիւ 80, եւ իր պատասխանը, առաջին բնագրին մէջ չկային. անոնք աւելցուեցան Ֆրետերիք Գ Կայսրընտիր Իշխանին հրահանգով, մասամբ երկրորդ հրատարակութեան մէջ ու մասամբ երրորդ հրատարակութեան մէջ, որով այս հարցումին երեք տարբերակներ կան: Այդ երեքէն ամփոփած ենք հետեւեալը.

Հարցում 80. Ի՞նչ տարբերութիւններ կան Տէրունական Ընթրիքին վերաբերեալ մեր եւ ուրիշ ըմբռնումներուն միջեւ: **

Պատասխան. Տէրունական Ընթրիքը մեզի կը վկայէ, թէ մենք ամէն մեղքի ամբողջական ներում ունինք Յիսուս Քրիստոսի միակ զոհով, որ ինք մէկ անգամ կատարեց խաչին վրայ, եւ թէ մենք Սուրբ Հոգիով պատուաստուած ենք Քրիստոսի մէջ, որ ըստ իր մարդկային բնութեան, այլեւս երկրի վրայ չէ, այլ երկինքի մէջ Աստուծոյ՝ իր Հօրը, աջ կողմը, եւ հոն մեզմէ պիտի պաշտուի: **

** Այս հարցումին եւ պատասխանին մնացեալ մասերը, որոնք կը գտնուին երկրորդ եւ երրորդ հրատարակութեանց տարբերակներուն մէջ, կ'ակնարկեն եկեղեցական տարբեր մեկնաբանութիւններէն մէկուն, ըստ որուն Տէրունական Ընթրիքը նկատուած է Քրիստոսի զոհաբերութեան տեւական կրկնութիւնը, որովհետեւ Քրիստոսի միակ քաւչարար մահը մեղքերու թողութեան համար անբաւարար կը սեպուի, նաեւ Քրիստոս մարմնապէս հացին ու գինիին կերպարանքին տակ սեպուելով անոնց մէջ կը պաշտուի: Այդ ըմբռնումը եւ անոր կիրարկումը կը մերժենք այս պատասխանին վերոյիջեալ մասերուն մէջ:

Եբր. 7:27, 9:12, 26, Մատթ. 26:28, Ղուկ. 22:19-20, Բ Կորնթ. 5:21, Ա Կորնթ. ա Եբր. 1:3, 8:1, Յովհ. 4:21-23, Կող. 3:1, Փիլիպ. 3:20, Ղուկ. 24:52-53, Գործք 7:55, Եսա. 1:11, 14, Մատթ. 15:9, Կող. 2:22-23, Երեմ. 2:13.

Հարցում 81. Ո՞վ պէտք է մասնակցի Տէրունական Ընթրիքին:

Պատասխան. Անոնք, որ իրենց մեղքերուն ցաւը ունին, սակայն կը վստահին, թէ անոնք ներուած են Քրիստոսի սիրոյն. եւ թէ Քրիստոսի չարչարանքները եւ մահը իրենց մնացեալ տկարութիւնները կը ծածկեն. ու նաեւ լրջօրէն կը փափաքին, որ իրենց հաւատքը ա՛լ աւելի զօրանայ ու իրենց կեանքերը աւելի սուրբ ըլլան: Բայց

անապաշխարները եւ անոնք, որ անկեղծ սրտերով Աստուծոյ չեն դառնար , իրենք իրենց համար դատապարտութիւնը կ'ուտեն ու կը խմեն:

Մատթ. 5:3, 6, Ղուկ. 7:37-38, 15:18-19, Ա Կորնթ. 10:20, 11:28, Սաղ. 103:3, 116:12-14, 50:15-16, Ա Պետ. 2:11-12, Տիտոս 1:16.

Հարցում 82. Անոնք, որոնք դաւանանքով ու կեանքով իրենք զիրենք անհաւատ, անաստուած ու ամբարիշտ կը յայտարարեն, պէ՞տք է այս Տէրունական Ընթրիքին ընդունուին:

Պատասխան. Ո՛չ. քանզի այսպէսով, Աստուծոյ ուխտը պղծուած կ'ըլլայ եւ իր բարկութիւնը ամբողջ ժողովքին դէմ կ'արժարժուի: Ուրեմն Քրիստոսի եկեղեցիին պարտականութիւնն է, Քրիստոսի եւ իր առաքեալներուն սահմանածին համաձայն, այդպիսի անձերը վտարել երկինքի թագաւորութեան բանալիներով, մինչեւ անոնք կեանքի բարելաւում մը ցուցաբերեն:

Ա Կորնթ. 10:21, 11:30-31, Եսա. 1:11, 13, Երեմ. 7:21, Սաղ. 50:16, 22, Մատթ. 17-18.

Հարցում 83. Երկինքի թագաւորութեան բանալիները ի՞նչ են:

Պատասխան. Սուրբ Աւետարանին քարոզութիւնը եւ քրիստոնէական պատիժը, որոնցմով երկինքի թագաւորութիւնը կը բացուի հաւատացեալներուն ու կը գոցուի անհաւատներուն դէմ:

Մատթ. 16:19, 18:15-18, Յովհ. 20:23.

Հարցում 84. Ինչպէ՞ս երկինքի թագաւորութիւնը կը բացուի ու կը գոցուի սուրբ աւետարանին քարոզութեամբ:

Պատասխան. Այսպէս. երբ Քրիստոսի հրահանգին համեմատ կը հռչակուի ու հրապարակաւ կը վկայուի ամէն եւ

իւրաքանչիւր հաւատացեալի, թէ երբ անոնք կ'ընդունին աւետարանին խոստումը հաւատքի միջոցաւ, բոլոր անոնց մեղքերը իրապէս կը ներուին Աստուծոյ կողմէ Քրիստոսի արժանիքներուն սիրոյն, եւ ընդ հակառակը, երբ բոլոր անհաւատներուն եւ անոնց, որ անկեղծօրէն չեն ապաշխարեր, կը հռչակուի ու կը վկայուի, թէ Աստուծոյ բարկութիւնը եւ յաւիտենական դատապարտութիւնը իրենց վրայ է այնքան ատեն, որ անոնք անդարձ մնան: Աւետարանին այս վկայութեան համաձայն Աստուած պանոնք պիտի դատէ, թէ՛ այս կեանքին, թէ՛ գալիք կեանքին մէջ:

Մատթ. 28:19, Յովհ. 3:18, 36, Մարկ. 16:16, Բ Թեսաղ. 1:7-9, Յովհ. 20:21-23, Մատթ. 16:19, Հռովմ. 2:2, 13-17.

Հարցում 85. Երկինքի թագաւորութիւնը ինչպէ՞ս կը բացուի ու կը գոցուի քրիստոնէական պատիժին միջոցով:

Պատասխան. Այսպէս. երբ Քրիստոսի հրահանգին համաձայն անոնք, որոնք քրիստոնէայ անունին տակ ոչ քրիստոնէայի վարդապետութիւն կամ վարմունք կը վարեն եւ կրկին ու կրկին եղբայրաբար յանդիմանուելէ ետք իրենց սխալներէն ու իրենց չար կեանքէն չեն հրաժարիր ու եկեղեցիին կամ այս նպատակին համար եկեղեցիին կողմէ կարգուած պաշտօնեաներուն կը ծանուցուի, եւ եթէ անոնք ասոնց յորդորանքն ալ անտեսեն, անոնց կ'արգիլուի Սուրբ Խորհուրդներուն մասնակցիլը, որով անոնք կը վտարուին քրիստոնէական եկեղեցիին հաղորդութենէն, եւ Աստուծոյ կողմէ կը վտարուին Քրիստոսի թագաւորութենէն. եւ երբ անոնք իրական բարեփոխում խոստանան եւ ապացուցանեն, նորէն կ'ընդունուին որպէս Քրիստոսի եկեղեցիին անդամներ:

Մատթ. 18:15-18, Ա Կորնթ. 5:12, Հռովմ. 12:7-9, Ա Կորնթ. 12:28, Ա Տիմ. 5:17, Բ Թեսաղ. 3:14, Ա Կորնթ. 5:3-5, Բ Կորնթ. 2:6-8, 10-11, Ղուկ. 15:18

ԻՆՆԵՐՈՐԴ ՄԱՍ ՅԱՂԱԳՍ ԳՈՒՈՒԹԵԱՆ

Հարցում 86. Քանի որ մենք մեր թշուառութենէն կ'ապատինք սոսկ շնորհքով, Քրիստոսի միջոցով, առանց մեր կողմէն որեւէ արժանիքի, ինչո՞ւ պէտք է տակաւին բարի գործեր ընենք:

Պատասխան. Որովհետեւ Քրիստոս, մեզ իր արիւնով փրկանաւորած եւ ապատած ըլլալով, նաեւ մեզ կը նորոգէ իր Սուրբ Հոգիով, իր բուն պատկերին համաձայն, որպէսզի այնպէս մեր ամբողջ կեանքով կարենանք ցոյց տալ Աստուծոյ հանդէպ մեր գոհութիւնը եւ երախտագիտութիւնը իր բարիքներուն համար, եւ որպէսզի ան կարենայ մեզմով փառաւորուիլ. նաեւ որպէսզի մենք կարենանք մեր հաւատքին վստահութիւնը ունենալ անոր պտուղներէն, եւ որպէսզի մեր աստուածապաշտ վարքով մեր դրացիներն ալ շահինք Քրիստոսի համար:

Ա Կորնթ. 6:19-20, Հռովմ. 6:13, 12:1-2, Ա Պետ. 2:5, 9-12, 3:1-2, Մատթ. 5:16, Բ Պետ. 1:10, Գաղ. 5:6, 24, Հռովմ. 14:19.

Հարցում 87. Անոնք, որ իրենց անապաշխար ու ապերախտ կեանքերէն Աստուծոյ չեն դառնար, չե՞ն կրնար փրկուիլ:

Պատասխան. Ո՛չ, երբե՛ք. քանզի Աստուածաշունչը կը յայտարարէ, թէ ոչ մէկ բղջախոհ, կռապաշտ, շնացող, գող, ազահ, գինով, զրպարտող, աւազակ կամ ասոնց նման ո՛չ մէկ անձ Աստուծոյ թագաւորութիւնը պիտի ժառանգէ:

Ա Կորնթ. 6:9-10, Եփես. 5:5-6, Ա Յովհ. 3:14-15, Գաղ. 5:21.

Հարցում 88. Մարդուն ճշմարիտ ապաշխարութիւնը քանի՞ մասերէ կը բաղկանայ:

Պատասխան. Երկու մասերէ. հին մարդուն մահացումէն եւ նոր մարդուն կենդանացումէն:

Հռովմ. 6:4-6, Եփես. 4:22-23, Կոր. 3:5, Ա Կորնթ. 5:7.

Հարցում 89. Ի՞նչ է հին մարդուն մահացումը:

Պատասխան. Մեր մեղքերով զԱստուած բարկացուցած ըլլալնուս համար սրտի անկեղծ վիշտ մըն է, եւ մեր մեղքերը ա՛լ աւելի ատելը ու անոնցմէ փախչիլը:

Սաղ. 51:3, 8, 17, Ղուկ. 15:18, Հռովմ. 8:13, Յովէլ. 1:12-13.

Հարցում 90. Ի՞նչ է նոր մարդուն կենդանացումը:

Պատասխան. Աստուծոյ մէջ, Քրիստոսի միջոցով, սիրով ու բերկրութեամբ, Աստուծոյ կամքին համաձայն՝ ամէն բարի գործերու մէջ ապրելու անկեղծ ուրախութիւն մըն է:

Հռովմ. 5:1-2, 14:17, Եսա. 57:15, Հռովմ. 6:10-11, Ա Պետ. 4:2, Գաղ. 2:20.

Հարցում 91. Բայց ի՞նչ են բարի գործեր:

Պատասխան. Միայն անոնք, որոնք ճշմարիտ հաւատքէ յառաջ կու գան՝ Աստուծոյ օրէնքին համաձայն՝ իր փառքին համար, եւ ո՛չ անոնք, որ մեր երեւակայութեան կամ մարդկային հաստատութեանց վրայ հիմնուած են:

Հռովմ. 14:23, Ա Թագ. 15:22, Եփես. 2:2, 10, Ա Կորնթ. 10:31, Բ Օր. 12:32, Եպեկ. 20:18, Մատթ. 15:8.

Հարցում 92. Ի՞նչ է Աստուծոյ օրէնքը:

Պատասխան. Աստուած այս բոլոր խօսքերը խօսեցաւ ըսելով.

Առաջին Պատուիրան

«Ես եմ Եհովա, քու Աստուածդ, որ քեզ Եգիպտոսի երկրէն, ծառայութեան տունէն, հանեցի: Ինծմէ վատ ուրիշ աստուածներ չունենաս»:

Երկրորդ Պատուիրան

«Դուն քեզի [*համար*]* կուռք չշինես, ոչ վերը երկինքի մէջ, ոչ ալ վարը երկրի վրայ, կամ երկրի տակը եղած ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը. անոնց երկրպագութիւն չընես ու վանոնք չպաշտես. վասն զի ես քու Տէր Աստուածդ նախանձոտ Աստուած եմ, որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդիներուն վրայ, մինչեւ անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ'ատեն զիս. եւ կ'ողորմիմ անոնց մինչեւ հազար ազգը՝ որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն»:

Ծանօթութիւն. **[համար]* յաւելումը Աստուածաշունչին արեւելահայերէն թարգմանութենէն առնուած է:

Երրորդ Պատուիրան

«Տէրոջը, քու Աստուծոյդ, անունը պարապ տեղը բերանդ չառնես. վասն զի Տէրը իր անունը պարապ տեղը բերան առնողը անմեղ պիտի չսեպէ»:

Չորրորդ Պատուիրան

«Հանգստութեան օրը միտքդ բեր՝ վանիկա սուրբ պահելու համար: Վեց օր պիտի աշխատիս ու բոլոր գործդ ընես. բայց եօթներորդ օրը Տէրոջը, քու Աստուծոյդ, հանգստութեան օրն է. այն օրը գործ մը չգործես, ոչ դուն, ոչ քու որդիդ, ոչ քու աղջիկդ, ոչ քու ծառադ ու աղախինդ, ոչ քու անասունդ, ոչ ալ տանդ մէջ եղած օտարականդ. քանզի Տէրը վեց օրուան մէջ ըրաւ երկինքն ու երկիրը, ծովը ու բոլոր անոր մէջ եղածները եւ եօթներորդ օրը հանգստացաւ. անոր համար Տէրը օրինեց հանգստութեան օրը ու սրբեց վանիկա»:

Հինգերորդ Պատուիրան

«Պատուէ՛ք քու հայրդ ու մայրդ, որպէս զի քու օրերդ երկայն ըլլան այն երկրին վրայ՝ զոր քու Տէր Աստուածդ կու տայ քեզի»:

Վեցերորդ Պատուիրան

«Սպանութիւն մի՛ ըներ»:

Եօթներորդ Պատուիրան

«Շնութիւն մի՛ ըներ»:

Ութերորդ Պատուիրան

«Գողութիւն մի՛ ըներ»:

Իններորդ Պատուիրան

«Քու դրացիիդ դէմ սուտ վկայութիւն մի՛ ըներ»:

Տասներորդ Պատուիրան

«Քու դրացիիդ տանը մի ցանկար. քու դրացիիդ կնոջը, կամ անոր ծառային, կամ անոր աղախինին, կամ անոր եզին, կամ անոր իշուն, եւ քու դրացիիդ ամենեւին մէկ բանին մի ցանկար»:

Ելից 20:1-17, Բ Օր. 5:6-21.

Հարցում 93. Այս պատուիրանքները ինչպե՞ս բաժնուած են:

Պատասխան. Երկու տախտակի մէջ. առաջինը մեզի կը սորվեցնէ, թէ ինչպե՞ս պէտք է վարուիմք Աստուծոյ հանդէպ. երկրորդը՝ թէ ի՞նչ պարտականութիւններ ունինք մեր դրացիին հանդէպ:

Ելից 34:28:29, Բ Օր. 4:13, 10:3-4.

Հարցում 94. Աստուած ի՞նչ կը պահանջէ առաջին պատուիրանքին մէջ:

Պատասխան. Որ ես, հոգւոյս փրկութիւնը ու երանութիւնը կորսնցնելու վտանգին պատճառաւ, հեռանամ ու փախչիմ ամէն կռապաշտութենէ, կախարդութենէ, գուշակութիւններէ, աւելորդապաշտութիւններէ, սուրբերու կամ որեւէ ուրիշ արարածներու աղերսանք մատուցանելէ, եւ սորվիմ շիտակ կերպով ճանչնալ միակ ճշմարիտ Աստուածը, միայն անոր վստահիմ, խոնարհութեամբ ու համբերութեամբ անոր ենթարկուիմ, ամէն լաւ բաներ միայն իրմէ ակնկալեմ, ամբողջ սրտովս զինքը սիրեմ, անկէ վախնամ ու զայն փառաւորեմ այնպէս, որ բոլոր արարածներէն հրաժարիմ եւ զանոնք ձգեմ, քան թէ նոյնիսկ փոքրագոյն արարքը կատարեմ իր կամքին հակառակ:

Ա Կորնթ. 6:9-10, 10:7, 14, Ղեւտ. 18:21, Բ Օր. 18:10-12, Մատթ. 4:10, Յայտ. 19:10, Յովհ. 17:3, Երեմ. 17:5, 7, Եբր. 10:36, Կող. 1:11, Հռովմ. 5:3-4, Փիլիպ. 2:14, Ա Պեւո. 5:5-6, Սաղ. 104:27, Եսա. 45:7, Յակ. 1:17, Բ Օր. 6:5, Մատթ. 22:37, 10:28, 5:19, 5:29-30, 10:37, Գործք 5:29.

Հարցում 95. Ի՞նչ է կռապաշտութիւն:

Պատասխան. Կռապաշտութիւն է հնարել կամ ունենալ որեւէ ուրիշ առարկայ, ինքզինք իր խօսքին մէջ յայտնող միակ ճշմարիտ Աստուծմէ զատ կամ անոր յաւելեալ, որուն վրայ մարդիկ իրենց վստահութիւնը դնեն:

Բ Մնաց. 16:12, Փիլիպ. 3:18-19, Գաղ. 4:8, Եփես. 2:12.

Հարցում 96. Աստուած ի՞նչ կը պահանջէ երկրորդ պատուիրանքին մէջ:

Պատասխան. Որ մենք ո՛չ մէկ կերպով զԱստուած ներկայացնենք պատկերներով, ոչ ալ զինք պաշտենք

որեւէ կերպով, որ իր խօսքին մէջ մեզի պատուիրածէն տարբեր ըլլայ:

Բ Օր. 4:15-16, 12:30, Ա Թագ. 15:23, Եսա. 40:18, Հռովմ. 1:23, Գործք 17:29.

Հարցում 97. Ուրեմն պատկերներ երբեք պէտք չէ՞ շինուին:

Պատասխան. Աստուած չի կրնար ներկայացուիլ որեւէ կերպով. կարելի չէ եւ արտօնուած չէ վԱստուած որեւէ կերպով ներկայացնել: Սակայն արարածներուն նկատմամբ, թէեւ պանոնք կարելի է ներկայացնել, բայց եւ այնպէս, Աստուած կ'արգիլէ շինել կամ ունենալ անոնց որեւէ նմանութիւնը, ըլլայ պանոնք պաշտելու համար կամ անոնց միջոցով Աստուծոյ ծառայելու համար:

Բ Օր. 4:15-16, 7:5, Եսա. 46:5, Հռովմ. 1:23, Ելից 23:24, 34:13-14, Թուոց 33:52.

Հարցում 98. Բայց պատկերները չէ՞ն կրնար թոյլատրուիլ եկեղեցիին մէջ նոյնպէս, ինչպէս գիրքերը կը թոյլատրուին աշխարհականներուն:

Պատասխան. Ո՛չ: Որովհետեւ մենք պէտք չէ ինքզինքնիս Աստուծմէ իմաստուն համարենք, որ կ'ուզէ իր ժողովուրդին սորվեցնել, ո՛չ համր պատկերներով, այլ իր Խօսքին կենդանի քարոզութեամբ:

Բ Տիմ. 3:16, Բ Պետ. 1:19, Երեմ. 10:1, Ամբ. 2:18-19.

Հարցում 99. Ի՞նչ կը պահանջուի երրորդ պատուիրանքին մէջ:

Պատասխան. Որ մենք Աստուծոյ անունը չպղծենք ու չեղծանենք, ո՛չ միայն անիծելով, հայիոյութեամբ կամ սուտ երդումներով, այլ նաեւ անպէտ երդումներով. եւ ուրիշներու ալ այս ահռելի մեղքին մասնակից չըլլանք, ըլլայ մեր լռութեամբ կամ թոյլտուութեամբ, եւ ամփոփ

կերպով, որ մենք Աստուծոյ սուրբ անունը գործածենք ո՛չ ուրիշ կերպով, քան վախով եւ ակնածանքով, որպէսզի ան մեզմէ շիտակ կերպով դաւանուի ու պաշտուի ու բոլոր մեր խօսքերով եւ գործերով փառաւորուի:

Ղեւտ. 5:4, 19:12, 24:11, Մատթ. 5:37, Եսա. 45:23-24, Մատթ. 10:32, Ա Տիմ. 2:8, Ա Կորնթ. 3:16-17.

Հարցում 100. Ուրեմն հայիոյելով ու երդումներով Աստուծոյ անունը պղծելը այնքան գարշելի՞ մեղք մըն է, որ իր բարկութիւնը կը բռնկի անոնց դէմ, որոնք չեն ջանար, իրենցմէ կախեալ եղած չափով, այս հայիոյութիւնը ու երդումները արգիլել ու վանոնք խափանել:

Պատասխան. Անտարակոյս այնպէս է, քանզի չկայ մեղք մը աւելի մեծ կամ վԱստուած աւելի բարկացնող, քան իր անունը պղծելը, եւ անոր համար պատուիրած է, որ այս մեղքը մահով պատժուի:

Ղեւտ. 5:1, 24:15.

Հարցում 101. Ուրեմն արտօնուա՞ծ է բարեպաշտ կերպով երդում ընել Աստուծոյ անունով:

Պատասխան. Այո՛, ըլլայ, երբ կառավարական պաշտօնեաներ պայն պահանջեն, կամ այլ պատճառներով կարիք ըլլայ՝ Աստուծոյ փառքին համար եւ մեր դրացիին փրկութեան ու բարօրութեան համար հաւատարմութիւն եւ ճշմարտութիւն հաստատել, վանոնք պահպանել ու յառաջ մղել: Քանզի այդպիսի երդումը Աստուծոյ խօսքին վրայ հիմնուած է, եւ արդարացիօրէն գործածուած է սուրբերուն կողմէ, թէ՛ Հին, թէ՛ Նոր Կտակարաններուն մէջ:

Ելից 22:11, Նէեմ. 13:25, Բ Օր. 6:13, Եբր. 6:16, Ծն. 21:24, Յես. 9:15, 19, Ա Թագ. 24:22, Բ Կորնթ. 1:23, Հռովմ. 1:9.

Հարցում 102. Արտօնուա՞ծ է նաեւ սուրբերու կամ ուրիշ արարածներու անունով երդնուլ:

Պատասխան. Ո՛չ. որովհետեւ օրինաւոր երդում մը վստուած կանչել է, որպէս միակ անձնաւորութիւնը, որ սրտերը կը ճանչնայ, որպէսզի ճշմարտութեան վկայ ըլլայ եւ զիս պատժէ, եթէ ստութեամբ երդնում. եւ այս պատիւը որեւէ արարածի չի պատկանիր:

Բ Կորնթ. 1:23, Մատթ. 5:34-35.

Հարցում 103. Աստուած ի՞նչ կը պահանջէ չորրորդ պատուիրանքին մէջ:

Պատասխան. Աստուած կ'ուզէ՝ առաջին, որ Աւետարանին քարոզութիւնը եւ դպրոցները շարունակուին, եւ ես, մասնաւորաբար հանգստեան օրը, փութաջանօրէն յաճախեմ Աստուծոյ Եկեղեցին իր Խօսքը լսելու, Սուրբ Խորհուրդները օգտագործելու, հրապարակաւ Աստուծոյ անունը կանչելու, եւ քրիստոսավայելօրէն աղքատներուն ողորմութիւն տալու համար: Երկրորդ, որ կեանքիս բոլոր օրերը դադրիմ իմ չար գործերէս եւ ինքզինքս Աստուծոյ ենթարկեմ, որպէսզի իր Սուրբ Հոգիով իմ մէջս ներգործէ, եւ այսպէսով այս կեանքին մէջ սկսիմ յաւիտենական Հանգիստը:

Բ Օր. 12:19, Տիտոս 1:5, Ա Տիմ. 3:14-15, Ա Կորնթ. 9:11, Բ Տիմ. 2:2, Ղեւտ. 23:3, Գործք 2:42, 46, Ա Կորնթ. 11:33, 14:19, 29, 31, Ա Տիմ. 2:1, Ա Կորնթ. 16:2, Եսա. 66:23.

Հարցում 104. Աստուած ի՞նչ կը պահանջէ հինգերորդ պատուիրանքին մէջ:

Պատասխան. Որ ամէն պատիւ, սէր եւ հաւատարմութիւն ցոյց տամ հօրս, մօրս եւ բոլոր անոնց, որոնք վրաս հեղինակութիւն ունին, անոնց բարի դաստիարակութեան ու հրահանգին ենթարկուիմ պարտ եղած հնապանդութեամբ, նաեւ անոնց տկարութիւնները եւ թերութիւնները համբերութեամբ կրեմ, քանզի Աստուծոյ

բարի կամքն ու հաճութիւնն է՝ մեզ անոնց ձեռքով
կառավարել:

Եփես. 6:1-2, 5-6, 5:22, Կող. 3:18-21, Հռովմ. 1:31, Առ. 23:22, Հռովմ.
13:1-8, Մատթ. 22:21.

Հարցում 105. Աստուած ի՞նչ կը պահանջէ վեցերորդ
պատուիրանքին մէջ:

Պատասխան. Որ ո՛չ մտածումներովս, ո՛չ խօսքերովս, ո՛չ
շարժումներովս, եւ շատ աւելի նուազ՝ գործերովս,
անպատուեմ, ատեմ կամ մեռցնեմ դրացիս, ըլլայ իմ կամ
ուրիշի ձեռքով, այլ մէկդի ձգեմ վրէժխնդրութեան ամէն
փափաք. նաեւ, որ ես ինքզինքիս վնաս չհասցնեմ, ոչ ալ
կամովին որեւէ վտանգի ենթարկուիմ: Նաեւ այս
պատճառաւ, մարդասպանութիւնը խափանելու համար,
կառավարական պաշտօնեան սուրով պինուած է:

Մատթ. 5:21-22, 5:39-40, 26:52, Առ. 12:18, Եփես. 4:26, Հռովմ. 12:19,
Մատթ. 4:5-7, Կող. 2:23, Ծն. 9:6, Հռովմ. 13:4,

Հարցում 106. Բայց այս պատուիրանքը միայն
մարդասպանութեան մասին կը խօսի:

Պատասխան. Մարդասպանութիւնը արգիլելով, Աստուած մեզի
կը սորվեցնէ, թէ ինք անոր արմատները կ'ատէ, ինչպէս՝
նախանձ, ատելութիւն, բարկութիւն ու վրէժխնդրութեան
փափաք, եւ թէ ասոնք բոլորը մարդասպանութեան պէս կը
սեպէ:

Յակ. 1:20, Գաղ. 5:20, Հռովմ. 1:20 Ա Յովհ. 2:9, 3:15,

Հարցում 107. Բայց բաւարար է, որ մենք մէկը չմեռցնենք,
վերոյիշեալ կերպով:

Պատասխան. Ո՛չ, քանզի երբ Աստուած կ'արգիլէ նախանձը,
ատելութիւնը եւ բարկութիւնը, ան մեզի կը պատուիրէ
սիրել մեր դրացին մեր անձին պէս, անոր ցոյց տալ

համբերութիւն, խաղաղութիւն, հեղուցիւն, ողորմութիւն եւ ամէն կերպ բարութիւն, ու անոր որեւէ վնասին առաջքը առնել, որքան որ մեզի կարելի է. նաեւ կը պատուիրէ, որ մենք նոյնիսկ մեր թշնամիներուն բարիք ընենք:

Մատթ. 7:12, 22:39, Հռովմ. 12:10, Եփես. 4:2, Գաղ. 6:1-2, Մատթ. 5:5, 5:45, Հռովմ. 12:18, Ելից 23:5, Հռովմ. 12:20

Հարցում 108. Եօթներորդ պատուիրանքը մեզի ի՞նչ կը սորվեցնէ:

Պատասխան. Թէ ամէն բղջախոհութիւն Աստուծմէ անիծեալ է. եւ թէ, հետեւաբար, մենք կը պարտինք ամբողջ սրտով այս մեղքը ատել եւ ապրիլ ողջախոհութեամբ եւ ժուժկալութեամբ, ըլլայ սուրբ ամուսնացեալ կամ ամուրի կեանքի մէջ:

Ղեւտ. 18:27, Բ Օր. 29:20-23, Ա Թեսաղ. 4:3-4, Ա Կորնթ. 7:4-9, Եբր. 13:4.

Հարցում 109. Այս պատուիրանքին մէջ Աստուած միայն շնութիւնը եւ այսպիսի անբարոյականութիւնները կ'արգիլէ:

Պատասխան. Քանի որ թէ՛ մեր մարմինը, թէ՛ մեր հոգին Սուրբ Հոգւոյն տաճարներն են, իր կամքն է, որ մենք զանոնք մաքուր եւ սուրբ պահենք. հետեւաբար, ան կ'արգիլէ նաեւ ամէն անմաքուր գործեր, շարժուձեւեր, խօսքեր, մտածումներ, փափաքներ եւ որեւէ բան, որ կրնայ մարդիկ անոնց հրապուրել:

Եփես. 5:3, 18, Ա Կորնթ. 6:18, Մատթ. 5:28, Ա Կորնթ. 15:33.

Հարցում 110. Աստուած ի՞նչ կ'արգիլէ ութերորդ պատուիրանքին մէջ:

Պատասխան. Աստուած կ'արգիլէ ո՛չ միայն այն գողութիւնները եւ կողոպուտները, որոնք

իշխանութիւններու կողմէ կը պատժուին, այլ այդ անուան տակ կ'ընդգրկէ նաեւ բոլոր չար դիտաւորութիւնները եւ խարդախութիւնները, որոնցմով կը ծրագրենք մեզի համար սեփականացնել այն ստացուածքները, որոնք մեր դրացիին կը պատկանին, ըլլայ ուժի միջոցով կամ իրաւունքի երեւոյթին տակ՝ ինչպէս անարդար կշիռքներով, կանգուններով կամ չափերով, խարդախ ապրանքով, կեղծ դրամով, վաշխառութեամբ* կամ որեւէ ուրիշ կերպով, որ Աստուած արգիլած է. նաեւ ամէն ընչաքաղցութիւն եւ Աստուծոյ պարգեւներուն աւելորդ շռայլութիւնը:

*վաշխ= բարձր, ապօրինի տոկոս: Վաշխառութիւն=ապօրինի, բարձր տոկոս առնելը. անգլերէն՝ usury.

Ա Կորնթ. 6:10, 5:10, Ղուկ. 3:14, Ա Թեսաղ. 4:6, Առ. 11:1, Եպեկ. 45:9-11, Բ Օր. 25:13, Սաղ. 15:5, Ղուկ. 6:35.

Հարցում 111. Բայց Աստուած ի՞նչ կը պահանջէ այս պատուիրանքին մէջ:

Պատասխան. Որ ես դրացիիս օգուտը յառաջ մղեմ ամէն պարագայի մէջ, որ կարելի եւ արտօնուած ըլլայ, եւ անոր հետ վարուիմ այնպէս, ինչպէս կ'ուզեմ, որ ուրիշներ ինծի հետ վարուին, եւ աւելին՝ որ հաւատարմօրէն աշխատիմ, որ ես ալ կարենամ չքաւորին իր կարօտութեան մէջ օգնել:

Մատթ. 7:12, Առ. 5:16, Եփես. 4:28.

Հարցում 112. Ի՞նչ կը պահանջուի իններորդ պատուիրանքին մէջ:

Պատասխան. Որ ես ռեւէ մարդու դէմ սուտ վկայութիւն չ'ընեմ ու ռեւէ մարդու խօսքերը չկեղծեմ. որ բամբասող կամ վրպարտող չ'ըլլամ. որ չդատեմ, ոչ ալ ուրիշի միանամ ռեւէ մարդ դատապարտելու հապճեպով կամ առանց զինքը լսելու, այլ ետ կենամ ամէն տեսակ սուտերէ եւ խաբէութիւններէ, զանոնք Սատանային յարմար գործերը

սեպելով, որպեսզի Աստուծոյ ծանր բարկութենէն խուսափիմ. նաեւ՝ ամէն դատերու եւ բոլոր ուրիշ գործերու մէջ եւ ճշմարտութիւնը սիրեմ, զայն անկեղծօրէն խօսիմ ու խոստովանիմ եւ իմ կարելիութեան չափովս արդարութիւնը ու դրացիիս պատիւը պաշտպանեմ ու յառաջ մղեմ:

Առ. 19:5, 9, 21:28, Սաղ. 15:3, Հռովմ. 1:29-30, Մատթ. 7:1, Ղուկ. 6:37, Ղեւտ. 19:11, Առ. 12:22, 13:5, Ա Կորնթ. 13:6, Եփես. 4:25, Ա Պետ. 4:8.

Հարցում 113. Տասներորդ պատուիրանքը ի՞նչ կը պահանջէ:

Պատասխան. Որ նոյնիսկ փոքրագոյն հակումը կամ մտածմունքը, որ Աստուծոյ պատուիրանքներէն որեւէ մէկուն հակառակ ըլլայ, երբեք մեր սրտերուն մէջ չմտնէ, այլ միշտ մեր ամբողջ սրտով ամէն մեղք ատենք եւ ամէն արդարութեան մէջ հաճոյք առնենք:

Հռովմ. 7:7

Հարցում 114. Բայց անոնք, որոնք Աստուծոյ դարձած են, կրնա՞ն այս պատուիրանքները կատարելապէս պահել:

Պատասխան. Ո՛չ. այլ նոյնիսկ ամէնէն սուրբ մարդիկը այս կեանքին մէջ այս հնազանդութեան սկզբնական պատիկ մաս մը հազիւ կրնան կատարել: Այդուհանդերձ, անկեղծ որոշումով կը սկսին ապրիլ, ո՛չ միայն Աստուծոյ պատուիրանքներէն ոմանց, այլ բոլորին համաձայն:

Հռովմ. 7:14, 15, 22, Յակ. 3:2.

Հարցում 115. Ուրեմն, եթէ ո՛չ մէկը կրնայ այս կեանքին մէջ Աստուծոյ Տասը Պատուիրանքները պահել, ինչո՞ւ Աստուած զանոնք այսքան խստօրէն կը հրահանգէ:

Պատասխան. Առաջին, որ ամբողջ մեր կեանքին ընթացքին կարենանք ա՛լ աւելի ճանչնալ մեր մեղաւոր բնութիւնը եւ այդպէս աւելի անձկալից ըլլանք մեղքերու թողութիւնը եւ

Քրիստոսի արդարութիւնը փնտռելու մէջ. նաեւ, որ անդադար ջանանք ու Աստուծմէ խնդրենք Սուրբ Հոգւոյն շնորհքը, որ ա՛լ աւելի Աստուծոյ պատկերին համաձայն նորոգուինք, մինչեւ վերջնական կատարելութեան հասնինք այս կեանքէն ետք:

Ա Յովհ. 1:9, Հռովմ. 3:20, 5:13, 7:7, 7:24, Ա Կորնթ. 9:24, Փիլիպ. 3:12-14.

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՄԱՍ ՅԱՂԱԳՍ ԱՂՕԹՔԻ

Հարցում 116. Աղօթքը ինչո՞ւ կարելոր է քրիստոնէաներուն համար:

Պատասխան. Որովհետեւ ան գլխաւոր մասն է այն գոհութեան, որ Աստուած մեզմէ կը պահանջէ. նաեւ՝ որովհետեւ Աստուած իր շնորհքը ու իր Սուրբ Հոգին պիտի տայ միայն անոնց, որոնք անկեղծ սրտի տենչով իրմէ անդադար կը խնդրեն եւ անոնց համար շնորհակալ են:

Սաղ. 50:14-15, Մատթ. 7:7, 13:12, Ղուկ. 11:9, 13, Սաղ. 50:15.

Հարցում 117. Ի՞նչ են պահանջքները այն աղօթքին, որ Աստուծոյ ընդունելի է ու ան պիտի լսէ:

Պատասխան. Առաջին, որ միակ ճշմարիտ Աստուծոյն, որ ինքզինք իր խօսքին մէջ յայտնած է, մեր սրտերէն աղօթենք բոլոր բաներուն համար, որ ան մեզի պատուիրած է, որ իրմէ խնդրենք: Երկրորդ, որ մենք իսկապէս ու լիօրէն ճանչնանք մեր կարիքը ու մեր թշուառութիւնը, որպէսզի կարենանք մենք զմեզ խորապէս խոնարհեցնել Աստուծոյ վեհութեան առջեւ: Երրորդ, որ մենք լիովին համոզուած ըլլանք, թէ ան, թէեւ մենք անարժան ենք, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի սիրոյն անկասկածօրէն պիտի լսէ մեր աղօթքը, ինչպէս ան իր Խօսքին մէջ խոստացած է:

Յովհ. 4:22-24, Հռովմ. 8:26, Ա Յովհ. 5:14, Սաղ. 145:18, Բ Մնաց. 20:12, Սաղ. 2:11, 34:18-19, Եսա. 66:2, Հռովմ. 10:13, 8:15-16, Յակ. 1:6, Յովհ. 14:13, Դան. 9:17-18, Մատթ. 7:8 Սաղ. 143:1.

Հարցում 118. Աստուած ի՞նչ պատուիրած է, որ իրմէ խնդրենք:

Պատասխան. Բոլոր այն բաները, որոնք հարկաւոր են մեր հոգիին ու մարմինին համար, որոնք Քրիստոս՝ մեր Տէրը, պարփակեց այն աղօթքին մէջ, որ ինք անձամբ մեզի սորվեցուց:

Յակ. 1:17, Մատթ. 6:33, Մատթ. 6:9-13, Ղուկ. 11:2-4.

Հարցում 119. Ի՞նչ կ'ըսէ Տէրունական Աղօթքը:

Պատասխան. «Ով Հայր մեր, որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ. քու թագաւորութիւնդ գայ. քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ. մեր ամէն օրուան հացը այսօր մեզի տուր. եւ մեզի ներէ մեր պարտքերը, ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտապաններուն. ու մեզ փորձութեան մի՛ տանիր, հապա [այլ]* չարէն մեզ ապատէ. քանզի քուկդ է թագաւորութիւնը եւ զօրութիւնը ու փառքը յաւիտեանս: Ամէն:»

* Աստուածաշունչին արեւելահայերէն թարգմանութիւնը *հապա* բառին տեղ *այլ* բառը կը գործածէ, որուն իմաստը աւելի հստակ է:

Մատթ. 6:9-13.

Հարցում 120. Ինչո՞ւ Քրիստոս մեզի պատուիրեց, որ Աստուծոյ այսպէս խօսք ողղենք՝ «Հայր մեր»:

Պատասխան. Որ անմիջապէս, մեր աղօթքին սկիզբէն իսկ, մեր մէջ Աստուծոյ հանդէպ գրգռէ մանկանման երկիւղ մը եւ վստահութիւն մը, որոնք մեր աղօթքին հիմերն են, այսինքն, որ Աստուած Քրիստոսի մէջ մեր Հայրը եղած է,

եւ ինչ որ ճշմարիտ հաւատքով իրմէ կը խնդրենք, շատ աւելի նուազ մեզի պիտի մերժէ, քան մեր ծնողքը մեզի կը մերժեն երկրաւոր բաներ:

Մատթ. 6:9, Մատթ. 7:9-11, Ղուկ. 11:11, Եսա. 49:15.

Հարցում 121. Ինչո՞ւ հոս անմիջապէս աւելցուած է՝ «որ երկինքն ես:

Պատասխան. Որ չ'ըլլայ, թէ մենք որեւէ երկրաւոր գաղափարներ գոյացնենք Աստուծոյ երկնային վեհութեան մասին, եւ որ իր ամենակարող զօրութենէն կարենանք ակնկալել բոլոր բաները, որ մեր հոգիին ու մեր մարմինին համար հարկաւոր են:

Երեմ. 23:24, Գործք 17:24, Հռովմ. 10:12.

Հարցում 122. Ի՞նչ է առաջին աղերսը:

Պատասխան. «Քու անունդ սուրբ ըլլայ», այսինքն՝ մեզի շնորհէ, որ նախ քեզ ուղիղ կերպով ճանչնանք ու քեզ սրբացնենք, փառաւորենք եւ գովենք քու բոլոր գործերուդ մէջ, որոնց մէջ քու զօրութիւնդ, իմաստութիւնդ, բարութիւնդ, արդարութիւնդ, ողորմութիւնդ եւ ճշմարտութիւնդ յստակօրէն ցուցադրուած են. նաեւ որ մենք այնպէս կարենանք կարգադրել եւ վարել մեր կեանքերը, մտածմունքները, խօսքերը եւ գործերը, որ քու անունդ երբեք չվարկաբեկուի, այլ մեր պատճառով պատիւ ու գովութիւն ստանայ:

Մատթ. 6:9, Յովհ. 17:3, Երեմ. 9:23-24, Մատթ. 16:17, Յակ. 1:5, Սաղ. 119:137-138, Ղուկ. 1:46, Սաղ. 145:8-9, 115:1, 71:8.

Հարցում 123. Ի՞նչ է երկրորդ աղերսը:

Պատասխան. «Քու Թագաւորութիւնդ գայ», այսինքն՝ այնպէս մեզ կառավարէ քու Խօսքովդ ու Հոգիովդ, որ մենք կարենանք զմեզ ա՛լ աւելի քեզի ենթարկել: Եկեղեցիդ պահէ՛ եւ բազմացուր. կործանէ՛ Սատանային գործերը, ամէն իշխանութիւն, որ քեզի դէմ բարձրանայ ու բոլոր չար դիտաւորութիւնները, որոնք քու Խօսքիդ դէմ հնարուին, մինչեւ քու թագաւորութեանդ կատարելութիւնը գայ, ուր դուն պիտի ըլլաս ամէն բան ամէն բանի մէջ: Մատթ. 6:10, Սաղ. 119:5, 51:18, Ա Յովհ. 3:8, Հռովմ. 16:20, Յայտ. 22:17, 20, Ա Կորնթ. 15:15, 28.

Հարցում 124. Ի՞նչ է երրորդ աղերսը:

Պատասխան. «Քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը, նոյնպէս երկրի վրայ», այսինքն՝ շնորհէ, որ մենք ու ամէն մարդ կարենանք հրաժարիլ մեր անձնական կամքերուն եւ անտրտունջ ու անդիմադիր հնազանդինք քու կամքիդ, որ միակ բարին է. եւ այսպէս, ամէն անձ կարենայ իր պաշտօնը ու իր կոչումը կատարել նոյնքան կամեցողութեամբ ու հաւատարմութեամբ, որքան երկինքի մէջ հրեշտակները կ'ընեն:

Մատթ. 6:10, Մատթ. 16:24, Տիտոս 2:12, Ղուկ. 22:42, Ա Կոր. 7:24, Եփես. 4:1, Սաղ. 103:20

Հարցում 125. Ի՞նչ է չորրորդ աղերսը:

Պատասխան. «Մեր ամէն օրուան հացը այսօր մեզի տուր». այսինքն՝ հաճէ՛ մեզի հայթայթել մեր մարմիններուն բոլոր կարիքները, որ այդպէսով քեզ ճանչնանք որպէս ամէն բարեաց միակ աղբիւրը ու գիտնանք, թէ ո՛չ մեր հոգը, ո՛չ մեր գործը, ո՛չ ալ նոյնիսկ քու պարգեւներդ կրնան մեզի օգտակար ըլլալ առանց քու օրհնութեանդ, ու հետեւաբար մեր վստահութիւնը բոլոր արարածներէն վերցնենք եւ միայն քու վրադ դնենք:

Մատթ. 6:11, Սաղ. 145:15, Մատթ. 6:25, Գործք 17:25, 14:17, Բ Օր. 8:3, Ա Կորնթ. 15:58, Սաղ. 127:1-2, 62:11, 55:22.

Հարցում 126. Ի՞նչ է հինգերորդ աղերսը:

Պատասխան. «Մեզի ներե՛ մեր պարտքերը, ինչպես մենք ալ կը ներենք մեր պարտապաններուն»։ Այսինքն՝ հաճե՛ քրիստոսի արեան սիրոյն, մեզի՛ խեղճ մեղաւորներուս, չվերագրել մեր բոլոր յանցանքները, ոչ ալ՝ այն մեղքը, որ տակաւին մեզի կը յարի, ինչպես նաեւ մեր մէջ կը գտնենք քու շնորհքիդ վկայութիւնը, թէ մեր բովանդակ նպատակն է մեր դրացիին սրտանց ներել:

Մատթ. 6:12, Սաղ. 51:1, Ա Յովհ. 2:1-2, Մատթ. 6:14-15.

Հարցում 127. Ի՞նչ է վեցերորդ աղերսը:

Պատասխան. «Ու մեզ փորձութեան մի տանիր, հապա [այլ] չարէն մեզ ապատէ»։ Այսինքն՝ քանի որ մենք մեր մէջ այնքան տկար ենք, որ մէկ վայրկեան իսկ չենք կրնար տոկալ, մինչ մեր մահացու թշնամիները՝ Սատանան, աշխարհը եւ մեր սեփական մարմինը(*), մեր վրայ անդադար կը յարձակին, դուն մեզ պահէ ու զօրացուր քու Սուրբ Հոգւոյդ զօրութեամբ, որ մենք այս հոգեւոր պատերազմին մէջ չպարտուինք, այլ հաստատ եւ յարատեւ կարենանք դիմադրել, մինչեւ ի վերջոյ կատարեալ յաղթանակ ստանանք:

*(Այսինքն՝ այս պարագային «մարմին» կը նշանակէ՝ մեղսաբնոյթը կամ մեղանշական բնութիւնը, թէ՛ մեր հոգիին, թէ՛ մեր մարմինին, ո՛չ ֆիզիքական տեսանելի մարմինը)

Մատթ. 6:13, Հռովմ. 8:26, Սաղ. 103:14, Ա Պետ. 5:8, Եփես. 6:12, Յովհ. 15:19, Հռովմ. 7:23, Գաղ. 5:17, Մատթ. 26:41, Մարկ. 13:33, Ա Թեաղ. 3:13, 5:23.

Հարցում 128. Ինչպե՞ս կը վերջացնես աղօթքդ:

Պատասխան. «Քանզի քուկդ է թագաւորութիւնը եւ զօրութիւնը ու փառքը յաւիտեանս»։ Այսինքն՝ որ այս բոլորը քեզմէ կը խնդրենք, որովհետեւ դուն, մեր

Թագաւորը ըլլալով եւ ամենակարող ըլլալով, կը կամենաս ու կրնաս մեզի տալ ամէն բարիք եւ ամէն այն բաները, որոնց համար կ'աղօթենք, որպէսզի, ո՛չ մենք, այլ քու սուրբ անունդ յաւիտեանս փառաւորուի:

Մատթ. 6:13, Հռովմ. 10:12, Բ Պետ. 2:9, Յովհ. 14:13, Սաղ. 115:1, Փիլիպ. 4:20.

Հարցում 129. Ի՞նչ կը նշանակէ՝ «Ամէն»:

Պատասխան. «Ամէն» կը նշանակէ, թէ ճշմարտապէս ու անտարակոյս այդպէս պիտի ըլլայ, քանզի աղօթքս աւելի վստահօրէն Աստուծմէ կը լսուի, քան թէ ես սրտիս մէջ կը պզամ, որ ես այս բաները իրմէ կը խնդրեմ:

Բ Կորնթ. 1:20, Բ Տիմ. 2:13.

**** ՎԵՐՋ ****